

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ
ՈՒՂԵՆԻՇՆԵՐ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ՏԱՐԱԾՔՈՒՄ

*Բարձրագույն կրթության Որակի ապահովման
Եվրոպական Ասոցիացիա*

Բնագիրը՝ անգլերեն

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարները 2003 թ.-ի սեպտեմբերի 19-ին կայացած Բեռլինի հանդիպմանը հրավիրեցին Բարձրագույն Կրթության Որակի Ապահովման Եվրոպական Ցանցին (ՈԱԵՑ), որպեսզի նա իր անդամների և ԵԱՀ-ի, ԲԿԵԱ-ի և ԵՈՒԱՄԻ-ի հետ համագործակցության միջոցով զարգացնի որակի ապահովման չափորոշիչների, գործընթացների և ուղենիշների համաձայնեցված փաթեթ և հետագոտի որակի ապահովման և/կամ հավատարմագրային գործակալությունների, հաստատությունների պատշաճ վերլուծության համակարգերի երաշխավորման եղանակներ և 2005 թ.-ին Բոլոնիայի գործառույթները համակարգող խմբի միջոցով զեկույցի նախարարներին: Վերջիններս ՈԱԵՑ-ին առաջարկել են նաև հաշվի առնել որակի ապահովման այլ միությունների և ցանցերի փորձը:

Սույն զեկույցի հիմքում ընկած են նախարարների կողմից խմբին տրված լիազորությունները, որոնք ներկայացվելու են բոլոր կազմակերպությունների հաստատմանը: Այսպիսի փոխըմբռնումը փոխադարձ հարգանքի և համագործակցության արդյունք է: Ուստի կցանկանամ ՈԱԵՑ-ի անդամ գործակալությունների հետ համատեղ շնորհակալություն հայտնել ԵԱՀ-ին, ԲԿԵԱ-ին և ԵՈՒԱՄԻ-ին այս գործընթացում իրենց սեղծագործական և անգնահատելի ներդրման համար:

Այս զեկույցը ուղղված է Եվրոպայի կրթության նախարարներին: Այնուամենայնիվ, մենք հուսով ենք, որ այն նաև լայն տարածում կգտնի բարձրագույն կրթության որակի ապահովմամբ հետաքրքրվողների շրջանակներում: Հուսով եմ, որ զեկույցը հետաքրքիր և ոգեշնչող կլինի ընթերցողների համար:

Պետք է շեշտել, որ այս զեկույցն Եվրոպական Բարձրագույն Կրթության Տարածքի (ԵԲԿՏ) հաստատությունների և գործակալությունների կողմից կատարած միայն առաջին քայլն է ակնկալվող արժեքների, սպասումների և որակի ու դրա ապահովման համար օրինակելի փորձի հաստատման երկար և բավականին դժվար ճանապարհին: Այն, ինչը գործի է դրվել Բեռլինի մանդատով, հետագա զարգացման կարիք կունենա, եթե այն պետք է ԵԲԿՏ-ին տրամադրի ամբողջությամբ գործող որակի ապահովման եվրոպական չափորոշիչներին: Եթե նշվածը տեղի ունենա, ապա Բոլոնիայի գործընթացի շատ մտահոգացումները ևս կիրականանան: Մինչ օրս գործընթացի բոլոր մասնակիցներն աջակցում են այս ջանքերի հաջողությամբ պսակմանը:

Քրիսթիան Թյուն
ՈԱԵՑ-ի տնօրեն
Փետրվար 2005 թ.

ՆԱԽԱԲԱՆ

Սույն զեկույցը նախագծվել է Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական ասոցիացիայի (ՈԱԵՅ)¹ կողմից իր անդամների, ԵԱՀ-ի, ԲԿԵԱ-ի և ԵՈՒԱՄԻ-ի հետ խորհրդակցելու և համագործակցելու, ինչպես նաև տարբեր համապատասխան ցանցերի հետ քննարկման միջոցով: Այն 2003 թ.-ի սեպտեմբերին Բեռլինի հոչակագրով ՈԱԵՅ-ին տրված լիազորությունների արտահայտությունն է, որի նպատակն է զարգացնել որակի ապահովման չափորոշիչների, գործընթացների և ուղենիշների համաձայնեցված փաթեթ և հետագոտել որակի ապահովման և/կամ հավատարմագրային գործակալությունների, մարմինների վերլուծության համակարգի երաշխավորման եղանակներ:

Ձեկույցը բաղկացած է 4 մասից: Ներածական մասին, որը բաղկացած է բովանդակությունից, նպատակներից և սկզբունքներից, հաջորդում են որակի ապահովման չափորոշիչների և ուղենիշների², որակի ապահովման գործակալությունների վերլուծության համակարգի և ապագայի մարտահրավերների ու զարգացման ուղիների վերաբերյալ բաժինները:

Ձեկույցի հիմնական արդյունքներն ու առաջարկությունները հետևյալն են՝

- Կձևավորվեն որակի ներքին և արտաքին ապահովման, ինչպես նաև որակի արտաքին ապահովման գործակալությունների Եվրոպական չափորոշիչներ:
- Որակի ապահովման Եվրոպական գործակալություններից կակնկալվի ներկայացնել պարբերական վերլուծություն 5 տարվա ընթացքում:
- Կխրախուսվեն ազգային վերլուծությունները:
- Կհրատարակվի որակի ապահովման գործակալությունների Եվրոպական գրանցամատյան:
- Եվրոպայի Գրանցման հանձնաժողովը կգործի որպես գործակալություններին գրանցամատյանում ներառելու համար որակի պատասխանատու:
- Կհիմնադրվի բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական խորհրդատվական ֆորում:

Երբ առաջարկությունները ներդրվեն՝

- Եվրոպական բարձրագույն կրթության տարածքում (ԵԲԿՏ) ի շնորհիվ համաձայնեցված չափորոշիչների և ուղենիշների կբարելավվի որակի ապահովման կայունությունը:
- Բարձրագույն ուսումնական հաստատությունները և որակի ապահովման գործակալությունները ԵԲԿՏ-ի շրջանակներում կկարողանան որակի ապահովման համար կիրառել ընդհանուր չափանիշներ:
- Գրանցամատյանը կդյուրացնի մասնագիտացված և վստահելի գործակալությունների ճանաչումը:

¹ 2004 թ. նոյեմբերի 4-ին ՈԱԵՅ-ի Գլխավոր վեհաժողովը հաստատեց Եվրոպական ցանցի վերակազմավորումը Եվրոպական ասոցիացիայի:

² «Որակի ապահովում» եզրույթը այս զեկույցում ներառում է գնահատման, հավատարմագրման և վերստուգման գործընթացները:

- Որակավորման ճանաչման ընթացակարգերը կամրապնդվեն:
- Որակի ապահովման գործակալությունների աշխատանքի նկատմամբ վստահությունը կբարձրանա:
- Գործակալությունների և գործընթացի այլ հիմնական մասնակիցների՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների, ուսանողների և աշխատանքի շուկայի ներկայացուցիչների տեսակետների և փորձի փոխանակումը կզարգանա բարձրագույն կրթության որակի ապահովման համար եվրոպական խորհրդատվական ֆորումի աշխատանքի շնորհիվ:
- Հաստատությունների և գործակալությունների միջև փոխադարձ վստահությունը կաճի:
- Կաջակցվի փոխճանաչումը:

ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ՀԱԿԻՐՃ ՑՈՒՑԱԿ

Բարձրագույն կրթության որակի ապահովման եվրոպական չափորոշիչների այս հակիրճ ցուցակը զեկույցի 2-րդ մասից է, սակայն այստեղ մեջբերված է դյուրըմբռնելիության համար, որը չի ներառում ուղենիշները: Չափորոշիչները ներկայացված են 3 բաժնով: Այն է՝ բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովում, բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովում և որակի ապահովման արտաքին գործակալությունների որակի ապահովում:

ԲԱԺԻՆ 1

Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ներքին ապահովման եվրոպական չափորոշիչներ և ուղեցույցեր

- 1.1 Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ: Հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրա հետ առնչվող գործընթացներ: Նրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ամրապնդման ռազմավարություն: Հաստատությունները պետք է նաև կարևորեն ուսանողների և բարձրագույն կրթության գործընթացի մասնակիցների դերը:
- 1.2 Ծրագրերի նև կրթական աստիճանների հաստատում, մոնիթորինգ և պարբերական վերանայում: Հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մոնիթորինգի հաստատված մեխանիզմներ:
- 1.3 Ուսանողների ուսումնառության գնահատում: Ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված չափանիշներով, սահմանված կարգով և ընթացակարգերով:
- 1.4 Դասախոսական կազմի որակի ապահովում: Հաստատությունները պետք է համալրվեն որակյալ և բանիմաց անձնակազմով, որոնք պետք է մասնակցեն արտաքին վերլուծությանը և զեկույցների պատրաստմանը:
- 1.5 Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին: Հաստատությունները պետք է ապահովեն ուսանողներին առարկայական ծրագրերով նախատեսված ռեսուրսներով:

- 1.6 Տեղեկատվական համակարգեր: Հաստատությունները պետք է երաշխավորեն, որ նրանք իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործառնությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են պատշաճ տեղեկատվություն:
- 1.7 Հրապարակայնություն: հաստատությունները պետք է իրենց առաջարկած ծրագրերի և կրթական աստիճանների մասին մշտապես հրատարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ, անկողմնապահ տեղեկատվություն:

ԲԱԺԻՆ 2

Բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման Եվրոպական չափորոշիչներ

2.1 Որակի ներքին ապահովման ընթացակարգերի կիրառում: Որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է հաշվի առնեն եվրոպական չափորոշիչների և ուղենիշների բաժին 1-ում նկարագրված որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությունը:

2.2 Որակի արտաքին ապահովման գործընթացի զարգացում: Որակի ապահովման գործընթացների նպատակները պետք է որոշվեն պատասխանատուների կողմից (ներառյալ բարձրագույն ուսումնական հաստատությունները) նախքան բուն գործընթացների ձևավորումը և պետք է հրատարակվեն գործընթացի կիրառման նկարագրությամբ:

2.3 Որոշումների ընդունման չափանիշներ: Որևէ պաշտոնական որոշում, որը կայացվել է որակի արտաքին ապահովման գործառնության արդյունքում, պետք է հիմնված լինի հետևողականորեն կիրառվող հրատարակված հստակ չափանիշների վրա:

2.4 Գործընթացների համապատասխանությունը նպատակներին: Որակի արտաքին ապահովման բոլոր գործընթացները պետք է հատուկ մշակվեն այնպես, որ համապատասխանեն իրենց առջև դրված նպատակներին:

2.5 Հաշվետվություն: Հրատարակված հաշվետվությունները պետք է լինեն հստակ և ընթեռնելի: Զեկույցներում պարունակվող ցանկացած որոշում, հանձնարարական կամ առաջարկ պետք է լինի մատչելի:

2.6 հաջորդող ընթացակարգեր: Որակի ապահովման այն գործընթացները, որոնք պարունակում են գործողության առաջարկներ, պետք է ունենան գործողությունների ծրագիր:

2.7 Պարբերական վերլուծություններ: Հաստատությունների և/կամ ծրագրերի որակի արտաքին ապահովումը պետք է նախաձեռնել պարբերական հիմունքներով: Կիրառվելիք պարբերաշրջանի տևողությունը և վերանայման գործընթացները պետք է հստակ որոշվեն և նախապես հրատարակվեն:

2.8 Համակարգի վերլուծություն: Որակի ապահովման գործակալությունները ժամանակ առ ժամանակ պետք է հրատարակեն հակիրճ զեկույցներ՝ նկարագրելով և վերլուծելով իրենց նկարագրությունից և գնահատումներից ստացված տվյալները:

ԲԱԺԻՆ 3

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 բարձրագույն կրթության համար արտաքին որակի ապահովման ընթացակարգերի կիրառում: Գործակալությունների որակի արտաքին ապահովումը պետք է նկատի ունենա Եվրոպական չափորոշիչների և ուղենիշների բաժին 2-ում նկարագրված որակի արտաքին ապահովման գործընթացների առկայությունն ու արդյունավետությունը:

3.2 պաշտոնական կարգավիճակ: Գործակալությունները Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում պետք է պաշտոնապես ճանաչվեն իրենց ազգային պետական իշխանությունների կողմից որպես որակի արտաքին ապահովման իրավասություններով օժտված գործակալություններ և պետք է ունենան իրավաբանական անձի կարգավիճակ: Նրանք պետք է գործեն օրենքով նախատեսված իրենց իրավասության սահմաններում:

3.3 Գործողություններ: Գործակալությունները պետք է պարբերաբար նախաձեռնեն որակի արտաքին ապահովման գործողություններ (ինստիտուցիոնալ և տեխնիկական մակարդակներով):

3.4 Ռեսուրսներ: Գործակալությունները պետք է ունենան ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական պատշաճ ռեսուրս, որը թույլ կտա նրանց արդյունավետ կազմակերպել և վարել որակի արտաքին ապահովման գործընթացները՝ ընթացակարգերի և գործընթացների պատշաճ նախապատրաստմամբ:

3.5 Առաքելություն: Գործակալությունները պետք է ունենան հրապարակայնորեն արտահայտված, հստակ և պարզ ձևակերպված նպատակներ:

3.6 Անկախություն: Գործակալությունները պետք է այն աստիճանի անկախ լինեն, որ կրեն բացառիկ պատասխանատվություն իրենց գործողությունների համար և երրորդ կողմը, որոնք են բարձրագույն կրթական հաստատությունները, նախարարությունները կամ բարձրագույն կրթությանն առնչվող այլ մասնակիցներ չազդեն գործակալությունների զեկույցներում նշված եզրակացությունների և առաջարկների վրա:

3.7 Գործակալությունների կողմից կիրառվող որակի արտաքին ապահովման չափանիշներ և գործընթացներ: Գործակալությունների կողմից կիրառվող գործընթացները, չափանիշները և ընթացակարգերը պետք է նախապես որոշված և հանրությանը մատչելի լինեն: Սովորաբար գործընթացները ներառում են՝

- Որակի ապահովման գործընթացի ինքնազննատման կամ համարժեք ընթացակարգ,
- Արտաքին գնահատում մասնագետների խմբի կողմից, ներառյալ՝ ուսանողության անդամ(ներ)ի և այցել տեղերում՝ ըստ գործակալության որոշման
- Չեկույցի հրապարակում՝ ներառելով ցանկացած որոշում, առաջարկ կամ այլ եզրահանգում,
- Չեկույցում նշված առաջարկությունների հիման վրա որակի ապահովման սուբյեկտի կողմից իրականացված գործողության գնահատում:

3.8 Հաշվետվության ընթացակարգեր: Գործակալությունները պետք է ունենան հաշվետվության ընթացակարգեր:

1. ԲՈՎԱՆՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ՆՊԱՏԱԿՆԵՐ ԵՎ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Բոլոնիայի գործընթացի մասնակից երկրների նախարարները 2003 թ.-ի սեպտեմբերի 19-ին կայացած Բեռլինի հանդիպմանը հրավիրեցին ՈԱԵՑ-ին, որպեսզի նա իր անդամների և ԵԱՀ-ի, ԲԿԵԱ-ի և ԵՈՒԱՄԻ-ի հետ համագործակցության միջոցով զարգացնի որակի ապահովման չափորոշիչների, գործընթացների և ուղենիշների համաձայնեցված փաթեթ և հետագոտի որակի ապահովման և/կամ հավատարմագրման գործակալությունների, հաստատությունների պատշաճ վերլուծության համակարգերի երաշխավորման եղանակներ և 2005 թ.-ին Բոլոնիայի գործառույթները համակարգող խմբի միջոցով զեկույցի նախարարներին: Վերջիններս ՈԱԵՑ-ին խնդրել են նաև հաշվի առնել որակի ապահովման այլ միությունների և ցանցերի փորձը:

ՈԱԵՑ-ն (ENQA) ողջունեց որակի ապահովման գործընթացում եվրոպական ուղղվածության զարգացմանը, ընդամին Բոլոնիայի գործընթացի զարգացմանը նպաստելու հնարավորությունը:

Այս գործընթացում ընդգրկվել են տարբեր կազմակերպություններ և խմբեր: Նախ ՈԱԵՑ-ի անդամներն ակտիվորեն մասնակցել են աշխատանքային խմբերի և ՈԱԵՑ-ի աշխատանքներին, զեկույցների նախագծերը ՈԱԵՑ-ի Գլխավոր վեհաժողովի օրակարգում կարևոր բաղկացուցիչներից են եղել 2004 թ.-ի հունիս-նոյեմբեր ամիսներին: Երկրորդը՝ Եվրոպական համալսարանների ասոցիացիան (ԵՀԱ), Բարձրագույն կրթական հաստատությունների Ասոցիացիան (ԲԿԵԱ), Եվրոպական ուսանողների ազգային միությունների կոնֆեդերացին (ԵՈԻԱՄ) և Եվրամիությունն ընդգրկվել են «Ե-4 խմբում»՝ կանոնավոր ժողովների միջոցով: Երրորդը՝ այլ ցանցերի հետ, ինչպիսիք են Հավատարմագրման Եվրոպական կոնսորցիումը (ՀԵԿ) և Որակի ապահովման գործակալությունների Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի ցանցը (ԿԱԵ ցանց), համագործակցությունը և նրանցից օժանդակություն ստանալը հատկապես արժեքավոր է եղել սույն փաստաթղթի մշակման գործընթացում: Վերջին հաշվով ՈԱԵՑ-ն ու իր գործընկերներն օգտագործեցին իրենց անհատական միջազգային կապերն ու փորձը և այս ճանապարհով երաշխավորեցին սույն գործընթացում պատշաճ միջազգային հեռանկարի ընդգրկումը:

Բարձրագույն կրթության որակի ապահովումն ամենևին էլ միայն Եվրոպայի մտահոգությունը չէ: Ամբողջ աշխարհում ավելանում է հետաքրքրությունը որակի և չափորոշիչների նկատմամբ՝ արտացոլելով Բարձրագույն կրթության արագ զարգացումը և ազդեցությունը մասնավոր և պետական հատվածի վրա: Այսպիսով, եթե Եվրոպան հասնի իր նպատակին, այն է՝ լինել աշխարհում ամենադինամիկ և գիտելիքի վրա հիմնված տնտեսությունը /Լիսաբոնի ռազմավարություն/, ապա Եվրոպայի Բարձրագույն կրթությունը պետք է ցուցադրի, որ այն լուրջ է վերաբերում իր կրթական ծրագրերի և կրթական աստիճանների որակին և ցանկանում է մշակել դրանց որակի ապահովման և հավաստման գործիքների խումբ: Բարձրագույն կրթության միջազգայնացմանն ընդդիման՝ Եվրոպայի ներսում և դրսում արվող նախաձեռնություններն ու պահանջները պատասխանի կարիք ունեն: Այս առաջարկների մշակման գործում բոլոր ընդգրկվածների նվիրյալ աշխատանքը լավ նշան է որակի ապահովման իրական Եվրոպական չափանիշների իրագործման համար, որի միջոցով կամրապնդվի ԵԲԿՏ-ի Բարձրագույն կրթության գրավչությունը:

Սույն զեկույցում պարունակվող առաջարկները հիմնավորված են մի շարք սկզբունքներով, որոնք ավելի մանրամասն ներկայացված են Բեռլինի մանդատի երկու բաժին կազմող երկու գլխում: Այնուամենայնիվ որոշ արմատական սկզբունքներ պետք է տարածվեն ամբողջ աշխատանքի վրա: Դրանք են՝

- Բարձրագույն կրթության բարձր որակի հանդեպ ուսանողների, ինչպես նաև՝ գործատուների և ամբողջ հասարակության հետաքրքրությունը,
- Ինստիտուցիոնալ իրքնավարության կարևորությունը, որը սահմանափակվում է մեծ պատասխանատվություն բերող գիտակցությամբ,
- Որակի արտաքին ապահովման նպատակներին համապատասխանելու համար հաստատություններին միայն համապատասխան պատասխանատվություն և ծանրաբեռնվածություն տալը:

ԵԲԿՏ-ն 40 երկրների ընդգրկմամբ, բնութագրվում է քաղաքական, բարձրագույն կրթական համակարգերի, սոցիալ-մշակութային և կրթական ավանդույթների, լեզուների, նպատակների և սպասումների բազմազանությամբ: Դա անհարիր է դարձնում Բարձրագույն կրթության որակի, չափորոշիչների և որակի ապահովման մեկ միասնական կոշտ մոտեցումը: Հաշվի առնելով վերոնշյալ բազմազանությունը, որն Եվրոպայի հպարտությունն է, սույն զեկույցն իր բովանդակությամբ դեմ է չափորոշիչների նկատմամբ նեղ, կարգադրողական և հստակ

ձևակերպված մոտեցմանը: Դա պայմանավորված է նրանով, որ նախևառաջ, այս մոտեցումն ավելի հավանական է, որ կբերի լայն շրջանակների կողմից չափորոշիչների ճանաչմանը և այն ավելի ամուր հիմք կստեղծի ԵԲԿՏ-ում տարբեր բարձրագույն կրթական հաստատությունների միավորման համար: Ընդհանուր չափորոշիչները պետք է ճանաչում ձեռք բերեն ազգային³ մակարդակով մասնակից երկրների մեծամասնության կողմից: Այնուամենայնիվ, ընդհանուր սկզբունքի արդյունքներից մեկն այն է, որ չափորոշիչներն ու ուղենիշներն ավելի շատ կենտրոնանում են այն բանի վրա, թե ինչ պետք է արվի, քան թե ինչպես կարելի է հասնել դրան, Այսպիսով, զեկույցը ներառում է գործընթացային նյութեր, սակայն հատկապես երկրորդ գլխում գերակայությունը տրվել է չափորոշիչներին և ուղենիշներին:

Վերջապես պետք է շեշտել, որ այս զեկույցի շուրջ համաձայնության գալը նույնը չէ, ինչ ԵԲԿԲ-ում որակի ապահովման չափելիության՝ Բոլոնիայի նպատակն իրականացնելը: Դեռևս աշխատանքներ պետք է տարվեն զեկույցում նշված նպատակների իրականացման ուղղությամբ և բարձրագույն կրթական հաստատությունների և որակի արտաքին ապահովման գործակալությունների միջև պետք է ձևավորի որակի ցանկալի մշակույթ:

2. ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ՈՒ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Որակի ապահովման չափորոշիչների, ընթացակարգերի և ուղենիշների համաձայնեցված փաթեթի մշակման վերաբերյալ նախարարների մանդատը բարձրացրեց մի շարք կարևոր հարցեր: «Որակի ապահովումը» բարձրագույն կրթության ընդհանուր դրույթն է, որն ունի տարբեր մեկնաբանություններ: Հնարավոր չէ տարբեր դեպքերի համար օգտագործել մի սահմանում: Նմանատիպ «չափորոշիչներ» բառը Եվրոպայում կիրառվում է տարբեր կերպ՝ սկսած նեղ սահմանված կարգավորիչ պահանջների դրույթից մինչև գործնական ավելի ընդհանրացված նկարագրություններ: Այս բառի նշանակությունը այլ է նաև ազգային տարբեր բարձրագույն կրթական համակարգերի տեղական համատեքստում:

Ավելին՝ մշակման գործընթացն ակնհայտ դարձրեց այն փաստը, որ բարձրագույն ուսումնական հաստատությունների և դրանց գնահատողների միջև հաստատվելիք պատշաճ փոխհարաբերության տեսանկյունից, որակի ապահովմամբ զբաղվողների շրջանակներում առկա են բավականին արմատական տարաձայնություններ: Մի մասը՝ հատկապես ծրագրեր կամ հաստատություններ հավատարմագրող գործակալությունները, այն կարծիքի են, որ որակի արտաքին ապահովումը հիմնականում «սպառողների պաշտպանության» համար է արվում՝ պահանջելով հստակ սահման դնել որակի ապահովման գործակալությունների և բարձրագույն ուսումնական այն հաստատությունների միջև, որոնց աշխատանքը գնահատվում է, մինչդեռ այլ գործակալություններ որակի արտաքին ապահովման հիմնական նպատակը համարում են ուսումնական ծրագրերի, չափորոշիչների և որակավորման աստիճանների շնորհման որակի կատարելագործման ուղղությամբ առաջարկների և խորհրդատվության տրամադրումը: Այս դեպքում գնահատողների և գնահատվողների միջև սերտ փոխհարաբերությունները պարտադիր են: Կան նաև այլ գործակալություններ, որոնք ցանկանում են տեղ զբաղեցնել վերոնշյալների միջև՝ փորձելով հավասարակշռել պատասխանատվությունն ու կատարելագործումը:

Այս փաստի նկատմամբ միայն որակի ապահովման գործակալությունները չէ, որ տարակարծիք են: Բարձրագույն կրթական հաստատությունների և ուսանողների ներկայացուցչական

³ Չեկույցում «ազգային» եզրույթի տակ պետք է հասկանալ նաև «տարածքային», որը վերաբերում է որակի ապահովման գործակալություններին, ազգային մոտեցմանը, ազգային իշխանությունների և այլն:

մարմինների հետաքրքրությունները ևս չեն համընկնում: Կրթական հաստատությունները ձգտում են ինքնավարության՝ նվազագույն արտաքին կարգավորմամբ կամ գնահատմամբ (հաստատության ամբողջ մակարդակով), իսկ ուսանողների ներկայացուցչական մարմինները ցանկանում են, որպեսզի հաստատությունը հաճախակի հետազոտությունների միջոցով հանրայնորեն պատասխանատու լինի ծրագրերի կամ որակավորման մակարդակով: Վերջին հաշվով, չափորոշիչներն ու ուղենիշները վերաբերում են միայն Բոլոնիայի հռչակագրում նկարագրված բարձրագույն կրթության երեք աստիճաններին և նպատակաուղղված կամ ընդհանուր ինստիտուցիոնալ կառավարումը:

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ և ՈՒՂԵՆԻՇՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ՆԱԽԱԴԻՅԱԼՆԵՐԸ

Զեկույցի այս բաժինը պարունակում է ԵԲԿՏ-ում որակի ապահովման համար առաջարկված չափորոշիչների և ուղենիշների փաթեթ: Չափորոշիչները և ուղենիշներն այնպես են մշակվել, որ եվրոպական բոլոր բարձրահույն ուսումնական հաստատություններում և որակի ապահովման գործակալություններում կիրառելի լինեն՝ անկախ այդ հաստատությունների կառուցվածքից, գործառույթներից ու չափերից և ազգային համակարգից: Ինչպես արդեն նշվել է, տեղին չէր զեկույցի այս գլխի առաջարկությունների բաժնում մանրամասն ներառել ընթացակարգերը, քանի որ ինստիտուցիոնալ և գործակալությունների ընթացակարգերը դրանց ինքնավարության կարևոր մասն են կազմում:

Որպես հաստատությունների համար մեկնարկային կետ՝ չափորոշիչները և ուղենիշները հաստատում են Եվրոպական համալսարանների միության (ԵՀՄ) 2003 թ.-ի հուլիսին ընդունած Գրացի հռչակագրի բովանդակությունը, որի իմաստը կայանում է նրանում, որ որակի ապահովման եվրոպական չափանիշների նպատակը փոխադարձ վստահության օժանդակումն է և թափանցիկության կատարելագործումը՝ միաժամանակ հարգելով ազգային մոտեցումների և մասնագիտությունների համակարգերի զանազանությունը: Չհակասելով Գրացի հռչակագրի բովանդակությանը՝ զեկույցում պարունակվող չափորոշիչները և ուղենիշները կարևորում են բարձրագույն կրթության ազգային համակարգերի առաջնայնությունը, այդ համակարգերի շրջանակներում ինստիտուցիոնալ և գործակալությունների ինքնավարության կարևորությունը և դասավանդվող առարկաներին ներկայացվող պահանջների տարբերությունները: Ի լրումն ասվածի՝ չափորոշիչները և ուղենիշները «պարտական» են ՈԱԵՑ-ի ղեկավարած կարգավորիչ «Եվրոպական գնահատման վերազգային ծրագրին» (ԵԳՎՄ), որը վերլուծել է Եվրոպայի վերազգային որակի գնահատման գործընթացի գործնական ներդրումը երեք առարկայախմբերում:

Չափորոշիչները և ուղենիշները հաշվի են առնում նաև 2005 թ. մայիսին ՈԱԵՑ-ի կողմից հրատարակված որակի միասնական հետազոտումը, որն ուսումնասիրել է որակի ապահովման զանազան ազգային մոտեցումների միջև տարբերությունների պատճառները և հակադրվել դրանց միացմանը: Ապա չափորոշիչները և ուղենիշներն արտացոլում են Բեռլինի հռչակագրի նախարարների այն դրույթը, որ ինստիտուցիոնալ ինքնավարության սկզբունքի, բարձրագույն կրթության որակի ապահովման առաջնայնության հարցում հետևողական լինելն ընկած է յուրաքանչյուր հաստատության հիմքում և սա ապահովում է բուհական համակարգի իրական պատասխանատվություն և հաշվետվություն որակի ազգային համակարգերում:

Հետևաբար այս չափորոշիչներում և ուղենիշներում հավասարակշռություն է հաստատվել որակի ներքին միջավայրի ստեղծման և զարգացման ու որակի արտաքին ապահովման ընթացակարգերի զբաղեցրած դերի միջև:

Նշենք նաև, որ չափորոշիչները և ուղենիշները շահել են հատկապես 2004 թ.-ի դեկտեմբերին Հավատարմագրման եվրոպական կոնսորցիումի (ՀԵԿ) կողմից հրատարակված «Օրինակելի փորձ», Եվրոպական ուսանողների ազգային միությունների կոնֆեդերացիայի՝ ԵՈՒԱՄ-ի, «Եվրոպական մակարդակով չափորոշիչների, ընթացակարգերի և ուղեցույցերի համաձայնեցված հայտարարագրում» ներառված հեռանկարներից և «Որակի ապահովման ու հավատարմագրման գործակալությունների արտաքին փորձագիտական գնահատման հայտարարագիր» (2004 թ., ապրիլ), ԵԿԱ-ի «Որակի ապահովման քաղաքականությունը Բեռլինի հռչակագրի համատեքստում» (2004 թ., ապրիլ) և Բարձրագույն կրթական հաստատությունների եվրոպական ասոցիացիայի՝ ԲԿԵԱ-ի, «Կրթական քաղաքականության հայտարարագիր Բոլոնիայի գործընթացի մասին» (2004 թ., հունիս): Վերջապես միջազգային հեռանկարներ են ընդգրկվել՝ համեմատելով որակի արտաքին ապահովման չափորոշիչները և Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ապահովման միջազգային ցանցի՝ INQAHE-ի, կողմից կիրառվող «Օրինակելի փորձի ուղենիշները»:

ԲԱԺԻՆ 1-Ի ԵՎ ԲԱԺԻՆ 2-Ի ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

Որակի ներքին և արտաքին ապահովման չափորոշիչները և ուղենիշները մշակվել են ԵԲԿՏ-ում գործող բարձրագույն ուսումնական հաստատությունների և որակի ապահովման գործակալությունների կիրառման համար՝ ընդգրկելով որակին և չափորոշիչներին վերաբերող հիմնական դրույթներ:

Այս չափորոշիչների և ուղենիշների նպատակը աջակցելն է բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի սեփական համակարգերի զարգացման գործում և գործակալություններին՝ իրականացնելու որակի արտաքին գնահատում, ինչպես նաև՝ չափանիշների ընդհանուր շրջանակի ձևավորումն է, որը կարող են կիրառվել և՛ հաստատությունների, և՛ գործակալությունների կողմից: Սա չի նշանակում, որ այս չափորոշիչները և ուղեցույցները գործողություններ են թելադրելու և մնալու են անփոփոխ:

ԵԲԿՏ-ի որոշ երկրներում կրթության նախարարությունը կամ դրան համարժեք մարմինը պատասխանատու է չափորոշիչներում և ուղենիշներում ընդգրկված որոշ բաժինների համար: Այս երկրներում, որտեղ այսպես է, նախարարությունը կամ կազմակերպությունը պետք է ապահովի որակի ապահովման պատշաճ մեխանիզմներ:

ՀԻՄՆԱԿԱՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Չափորոշիչները և ուղենիշները հիմնված են ԵԲԿՏ-ում բարձրագույն կրթության որակի ներքին և արտաքին ապահովման մի շարք հիմնական սկզբունքների վրա: Դրանք են՝

- Բարձրագույն կրթություն տրամադրողները պատասխանատու են իրենց մատուցած նյութի որակի և դրա ապահովման համար,
- Բարձրագույն կրթության որակի և չափորոշիչների նկատմամբ հասարակության հետաքրքրության պաշտպանությունը,
- ԵԲԿՏ-ում ուսանողների և բարձրագույն կրթության այլ շահառուների համար ուսումնական ծրագրերի որակի բարձրացումը,

- Արդյունավետ կազմակերպական կառուցվածքների ներդրումը, որոնց շրջանակներում հնարավոր կլինի մատուցել և աջակցել ուսումնական ծրագրերին,
- Որակի ապահովման գործընթացում արտաքին փորձագիտության կիրառման և թափանցիկության կարևորությունը,
- Բարձրագույն կրթական հաստատություններում որակի միջավայրի խրախուսումը,
- Այնպիսի գործընթացների զարգացումը, որոնց միջոցով բարձրագույն կրթական հաստատությունները կհավաստեն հաշվետու լինելը, այդ թվում՝ պետական և մասնավոր ներդրումների համար,
- Հաշվետվության մակարդակով որակի ապահովումը պետք է համատեղելի լինի զարգացման նպատակով որակի ապահովման հետ,
- Հաստատությունները պետք է ցուցադրեն որակ, ինչպես երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս,
- Պետք է կիրառվեն բազմազանությանը և նորարարությանը չխոչընդոտող գործընթացներ:

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՆԻՉՆԵՐԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Չափորոշիչների և ուղենիշների նպատակներն են՝

- ԵԲԿՏ-ում բարձրագույն ուսումնական հաստատություններում սանողներին մատչելի կրթության բարելավումը,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի կառավարման և բարձրացման հարցում դրանց աջակցելը, հետևաբար ինստիտուցիոնալ ինքնավարության հաստատման գործում օգնելը,
- Որակի ապահովման գործակալությունների աշխատանքի համար հիմքեր ստեղծելը
- Որակի արտաքին ապահովման ավելի թափանցիկ և բոլոր ընդգրկվածների համար ավելի դյուրին դարձնելը:

ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ ԵՎ ՈՒՂԵՆԻՉՆԵՐԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Չափորոշիչների և ուղենիշների խնդիրներն են՝

- Խրախուսել մտավոր և կրթական նվաճումները խթանող բարձրագույն կրթական հաստատությունների զարգացումը,
- Բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ համապատասխան գործակալությունների որակի ապահովման սեփական միջավայրի զարգացման համար աջակցման և ուղղորդման ռեսուրսների տրամադրումը,
- Բարձրագույն կրթական գործընթացների և արդյունքների համապատասխան հաստատությունների, ուսանողների, գործատուների և այլ մասնակիցների սպասումների խրախուսումը,
- ԵԲԿՏ-ում որակի ապահովման և բարձրագույն կրթության մատուցման համար ընդհանուր շրջանակի ներդրումը:

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ

Այս գեկույցում առաջարկված չափորոշիչներն ու ուղենիշները որակի արտաքին ապահովմանը կարևոր տեղ են տրամադրում: Որակի արտաքին ապահովման ձևերը կախված են համակարգերի բնույթից և կարող են ներառել տարբեր տեսակի ինստիտուցիոնալ, առարկայական ծրագրերի գնահատում, հավատարմագրում, ծրագրային և ինստիտուցիոնալ մակարդակներ, ինչպես նաև՝ այս բոլորի համակցումը: Ամբողջովին արդյունավետ լինելու համար այսպիսի արտաքին գնահատումները կախված են որակի ապահովման կոնկրետ նպատակներով ներքին ռազմավարությունից և հաստատությունների շրջանակներում այդ նպատակների ձեռքբերմանն ուղղված մեխանիզմների և մեթոդների կիրառումից:

Որակի ապահովումը կարող է իրականացվել արտաքին գործակալությունների կողմից տարբեր նպատակներով, ներառյալ՝

- Բարձրագույն կրթության ազգային չափորոշիչների պաշտպանություն,
- Ծրագրերի և/կամ հաստատությունների հավատարմագրում
- Ծրագրերի կամ հաստատությունների վերաբերյալ անկախ հաստատվող ինֆորմացիայի (որակական և քանակական) հանրային տրամադրում,
- Որակի կատարելագործում և բարձրացում:

Եվրոպական որակի ապահովման գործակալությունների գործողությունները կարտացոլեն այն իրավասությունների և միջավայրի իրավական, սոցիալական և մշակութային պահանջումները, որում որ գործում են: Որակի ապահովման գործակալությունների որակի ապահովմանը վերաբերող եվրոպական չափորոշիչները ընդգրկված են սույն մասին երրորդ բաժնում:

Որակի ապահովման գործակալությունների կողմից իրականացվող գործընթացը կախված կլինի իրենց առջև դրված նպատակներից և ակնկալվող արդյունքներից: Գլխավորապես շեշտը որակի բարձրացման վրա դնող գործակալությունների կողմից ընդունված ընթացակարգերը կարող է մի քիչ տարբերվեն այն գործակալություններից, որոնց գործառնությունն առաջին հերթին «սպառողների պաշտպանվածությունն է»: Դրան հաջորդող չափորոշիչները արտացոլում են Եվրոպայում որակի արտաքին ապահովման գործում հիմնականում կիրառվող փորձը, սակայն չեն փորձում խորացված նյութ տրամադրել այն մասին, թե ինչը պետք է ուսումնասիրվի կամ ինչպես պետք է իրականացվեն որակի ապահովման գործողությունները: Վերջինս ազգային ինքնավարության հիմքն է՝ չնայած նրան, որ գործակալությունների և իշխանությունների միջև տեղեկատվության փոխանակումը արդեն տանում է դեպի միասնական բաղկացուցիչների երևան գալուն:

Այնուամենայնիվ, որակի արտաքին ապահովման գործընթացում գոյություն ունեն օրինակելի փորձի որոշ ընդհանուր սկզբունքներ:

Դրանք են՝

- Հարգանքը ինստիտուցիոնալ ինքնավարության նկատմամբ,
- Որակի արտաքին ապահովման գործընթացներում ուսանողների և այլ մասնակիցների, ինչպիսիք են աշխատանքի շուկայի ներկայացուցիչները, հետաքրքրությունների կենտրոնում գտնվելը,
- Հաստատությունների որակի ներքին ապահովման սեփական գործողությունների արդյունքներից հնարավոր չափով շատ օգուտ քաղելը:

Ուղենիշները լրացուցիչ տեղեկատվություն են տրամադրում կիրառելի փորձի վերաբերյալ և որոշ դեպքերում մանրամասն բացատրում են չափորոշիչների իմաստը և կարևորությունը:

ԲԱԺԻՆ 1

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՐԱԿԻ ՆԵՐՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

1.1 Որակի ապահովման քաղաքականություն և ընթացակարգ
Չափորոշիչ.

Հաստատություններն իրենց ծրագրերի, կրթական աստիճանների որակի և չափորոշիչների ապահովման համար պետք է մշակեն քաղաքականություն և դրա հետ առնչվող գործընթացներ: Նրանք պետք է հետևողականորեն նպաստեն իրենց աշխատանքում որակի կարևորությունը և ապահովումը գնահատող միջավայրի զարգացմանը: Այն ձեռք բերելու համար հաստատությունները պետք է զարգացնեն և իրագործեն որակի շարունակական ուժեղացման ռազմավարություն:

Ռազմավարությունը, քաղաքականությունը և ընթացակարգերը պետք է պաշտոնապես հաստատված ր հանրությանը մատչելի լինեն: Դրանք պետք է նաև կարևորեն ուսանողների և բարձրագույն կրթության մասնակիցների դերը:

Ուղենիշներ.

Պաշտոնապես հաստատված քաղաքականությունը և ընթացակարգերը բարձրագույն ուսումնական հաստատություններին տրամադրում են որակի ապահովման համակարգերի արդյունավետ զարգացման և մոնիթորինգի շրջանակներ: Դրանք նաև օգնում են հաստատություններին հանրային վստահություն ձեռք բերել իրենց ինստիտուցիոնալ ինքնավարության նկատմամբ: Քաղաքականությունը դրույթներ է պարունակում մտադրությունների և դրանց հասնելու հիմնական միջոցների վերաբերյալ, սակայն ընթացակարգը կարող է ավելի մանրամասն տեղեկատվություն տալ քաղաքականության ներդրման եղանակների և օգտակար չափանիշներ տրամադրել ընթացակարգերի իրականացման գործնական կողմին տեղեկանալ ցանկացողներին:

Քաղաքականության դրույթը պետք է ներառի՝

- Հաստատություններում հետազոտական աշխատանքի և ուսուցման միջև կապը,
- Որակի և չափորոշիչների վերաբերյալ հաստատության ռազմավարությունը,
- Որակի ապահովման համակարգի կազմակերպումը,
- Որակի ապահովման համար բաժինների, դպրոցների, անձնակազմի և այլ կազմակերպման միավորների ու անհատների պատասխանատվությունը,
- Որակի ապահովման գործընթացի մեջ ուսանողների ներառումը,
- Քաղաքականության ներդրման, մոնիթորինգի և վերլուծության եղանակները:

ԵԲԿՏ-ի իրականացումը գլխավորապես կախված է հաստատության բոլոր մակարդակներում աշխատողների նվիրումից, որոնք կերաշխավորեն, որ բոլոր ծրագրերն ունեն պարզ և սպասվող արդյունք, անձնակազմը պատրաստ է, ցանկանում է և ի վիճակի է տրամադրել ուսանողներին այդ արդյունքներին հասնելու համար ուսումնական աջակցություն և որ փորձ, նվիրում ունեցող անձնակազմը աջալուրջ է իր աշխատանքի նկատմամբ: Բոլորբարձրագույն ուսումնական հաստատությունները պետք է ձգտեն զարգացնել և ուժեղացնել այն կրթությունը, որը առաջարկում են իրենց ուսանողներին:

1.2 Ծրագրերի և կրթական աստիճանների հաստատում, մոնիթորինգ և պարբերական վերանայում

Չափորոշիչ.

Հաստատությունները պետք է ունենան ծրագրերի և կրթական աստիճանների հաստատման, պարբերական վերանայման և մոնիթորինգի համար հաստատված մեխանիզմներ:

Ուղենիշներ.

Բարձրագույն կրթության բնագավառում ուսանողների և այլ մասնակիցների վստահությունը հավանական է, որ կարելի է ձեռք բերել լավ մշակված, կանոնավոր կերպով մոնիթորինգի ենթարկվող, պարբերաբար վերլուծվող ծրագրերի մասին վկայող որակի ապահովման արդյունավետ գործողությունների միջոցով, որոնց շնորհիվ ապահովվում է գործողությունների արդիականությունը և տարածվածությունը:

Ծրագրերի և կրթական աստիճանների որակի ապահովումը պետք է ընդգրկի՝

- Ակնկալվող ուսումնառության արդյունքների հրատարակումը և զարգացումը,
- Ուսումնական պլանի և ծրագրի նախագծի ու բովանդակության նկատմամբ ուշադիր լինելը,
- Ուսուցման տարբեր ձևերի (ստացիոնար, մասնակի, հեռակա, էլեկտրոնային ուսումնառություն) առանձնահատուկ կարիքների և բարձրագույն կրթության ձևերը (գիտական, մասնագիտական և միջին մասնագիտական),
- Ուսումնառության պատշաճ ռեսուրսների առկայությունը,
- Մեկ այլ մարմնի կողմից հաստատված ծրագրի հաստատման ընթացակարգերը,
- Ուսանողների առաջընթացի և ձեռքբերումների մոնիթորինգը,
- Ծրագրերի կանոնավոր, պարբերական վերլուծությունը,
- Գործատուներից, աշխատանքի շուկայի ներկայացուցիչներից և այլ համապատասխան կազմակերպություններից ստացվող հետադարձ կապը,
- Որակի ապահովման գործընթացներում ուսանողների մասնակցությունը:

1.3 ուսանողների ուսումնառության գնահատում

Չափորոշիչ.

Ուսանողների ուսումնառությունը պետք է գնահատվի ընդունված չափանիշներով, սահմանված կորզով և ընթացակարգերով:

Ուղենիշներ.

Ուսանողների ուսումնառության գնահատումը բարձրագույն կրթության ամենակարևոր բաղադրիչներից է: Գնահատման արդյունքները կարևոր են ուսանողների հետագա կարիերայի համար: Հետևապես, կարևոր է, որ գնահատումը մասնագիտորեն կատարվի և հաշվի առնի ստուգարքի և քննության գործընթացների մասին գոյություն ունեցող լայնատարած գիտելիքները: Գնահատումը նաև արժեքավոր տեղեկատվություն է տրամադրում հաստատություններին ուսուցման արդյունավետության և ուսանողներին աջակցելու մասին:

Ուսանողների ուսումնառության ընթացակարգերը պետք է՝

- նախագծվեն սպասվելիք ուսումնառության արդյունքների և այլ ծրագրերի նպատակների ձեռքբերման չափման համար,
- համապատասխանեն իրենց նպատակին՝ լինի դա վերլուծական, կազմիչ, թե ամփոփիչ,
- գնահատման նշման հստակ և հրատարակված չափանիշներ,
- ձեռնարկվեն այն մարդկանց, որոնք կարևորում են գնահատման դերը ուսանողների գիտելիքների և ակնկալվող որակավորման ձեռքբերման գործում,
- որտեղ որ հնարավոր է, չհիմնվեն առանձին քննողների դատողությունների վրա,
- պետք է հաշվի առնեն քննությունների կարգավորման բոլոր հնարավոր հետևանքները,

- ուսանողի բացակայության, հիվանդության կամ այլ մեղմացուցիչ հանգամանքի վերաբերյալ ունենան հստակ սահմանված կարգ,
- ապահովեն գնահատման անցկացումը հաստատության կողմից ընդունված ընթացակարգերին համապատասխան
- վարչական ստուգումների օբյեկտ լինեն գործընթացի ճշգրտությունը հաստատելու նպատակով

Ավելին՝ ուսանողներին պետք է հստակ տեղեկացնել իրենց ծրագրի նկատմամբ կիրառվող գնահատման ռազմավարության մասին, ինչ քննություններ կամ այլ գնահատման մեթոդներ կարող են կիրառվել, ինչ է ակնկալվում իրենցից և ինչ չափորոշիչներ են կիրառվելու իրենց պատասխանը գնահատելու ժամանակ:

1.4 Դասախոսական կազմի որակի ապահովում

Չափորոշիչ.

Հաստատությունները պետք է համալրվեն որակյալ և բանիմաց անձնակազմով, որոնք պետք է մասնակցեն արտաքին վերլուծությանը և զեկույցների պատրաստմանը:

Ուղենիշներ.

Ուսանողների մեծամասնության համար դասախոսները ուսումնառության միակ ամենակարևոր ռեսուրսն են: Շատ կարևոր է, որ դասավանդողները ունենան խորը և մասնագիտական գիտելիքներ իրենց առարկայի վերաբերյալ, դրանք ուսանողներին արդյունավետ փոխանցելու անհրաժեշտ հմտություն և փորձ ու կարողանան ստանալ իրենց կողմից մատուցած գիտելիքների արդյունքը: Հաստատությունները պետք է ունենան աշխատանքի ընդունելու գործընթացի համապատասխան մեխանիզմներ և համոզված լինեն, որ նոր աշխատակիցներն ունեն մասնագիտական պատրաստվածության նվազագույն մակարդակ: Դասախոսական անձնակազմին պետք է տրվի հնարավորություն զարգացնել և ընդլայնել իրենց դասավանդման հմտությունները, և պետք է խրախուսվի իրենց գիտելիքների արժեքը: Հաստատությունները կարիքավոր դասախոսներին պետք է անհրաժեշտ միջոցներ տրամադրեն իրենց հմտությունները պատշաճ մակարդակով խորացնելու համար և պետք է ունենան անարդյունավետ աշխատող դասախոսներին աշխատանքից հեռացնելու համապատասխան միջոցներ:

1.5 Ուսումնառության ռեսուրսներ և աջակցում ուսանողներին

Չափորոշիչ.

Հաստատությունները պետք է ապահովեն ուսանողներին առարկայական ծրագրերով և նախատեսված ռեսուրսներով:

Ուղենիշներ.

Ի լրումն դասախոսների՝ ենթադրվում է, որ ուսանողներն իրենց ուսումնառության ընթացքում օգտվում են նաև տարբեր ռեսուրսներից, որոնք ինչպես նյութական (գրադարաններ և համակարգչային սարքավորումներ), այնպես էլ մարդկային բնույթ ունեն (անհատական դասախոսներ և խորհրդատուներ): Ուսումնառության ռեսուրսները, այլ աջակցող մեխանիզմները պետք է մշտապես մատչելի լինեն ուսանողների համար, նախագծված լինեն նրանց կարիքների համապատասխան ու հաշվի առնեն այդ ծառայություններից օգտվողների կարծիքը: Հաստատությունները պետք է մոնիթորինգ իրականացնեն, վերլուծեն և բարելավեն իրենց ուսանողներին մատուցվող օժանդակ ծառայությունների արդյունավետությունը:

1.6 Տեղեկատվական համակարգեր

Չափորոշիչ.

Հաստատությունները պետք է երաշխավորեն, որ նրանք իրենց ուսումնական ծրագրերի և այլ գործողությունների կառավարման արդյունավետության համար հավաքագրում, վերլուծում և օգտագործում են պատշաճ տեղեկատվություն:

Ուղենիշներ.

Հաստատության մասին իրենց գիտելիքը որակի արդյունավետության ապահովման նախադրյալն է: Կարևոր է, որ հաստատություններն ունենան իրենց գործունեությանը վերաբերող տեղեկատվության հավաքագրման և վերլուծության պատշաճ միջոցներ, առանց որի չեն կարող ճիշտ գնահատել իրենց աշխատանքի արդյունավետությունը և պարզել բացթողումները կամ նորարարական փորձերի արդյունքները:

Յուրաքանչյուր հաստատության կողմից պահանջվող որակին վերաբերող տեղեկատվական համակարգերը ինչ-որ չափով կախված են տեղային հանգամանքներից, բայց առնվազն պետք է ներառեն՝

- Ուսանողների առաջադիմության և հաջողության մակարդակը,
- Շրջանավարտների՝ աշխատանքով ապահովվածությունը,
- Ուսանողների բավարարվածությունը ծրագրերով,
- Դասախոսների պատրաստվածությունը,
- Ուսանողական կազմի ընդհանուր ուրվագիծը,
- Ուսումնառության մատչելի ռեսուրսները և դրանց ծախսերը,
- Հաստատությունների գործունեության հիմնական ցուցանիշները:

ԵԲԿՏ-ում և դրանից դուրս նմանատիպ հաստատությունների հետ համեմատվելը ևս հաստատությունների համար կարևոր արժեք է, որը հնարավորություն է տալիս նրանց ընդլայնել ինքնուսուցման շրջանակները և բարելավել իրենց գործունեությունը:

1.7 Հրապարակայնություն

Չափորոշիչ.

Հաստատությունները պետք է մշտապես հրատարակեն ինչպես քանակական, այնպես էլ որակական նորացված, անաչառ, անկողմնապահ տեղեկատվություն այն ծրագրերի և կրթական աստիճանների մասին, որոնք առաջարկում են:

Ուղենիշներ.

- Բարձրագույն ուսումնական հաստատություններն իրենց հասարակական դերը կատարելու համար պատասխանատու են տեղեկատվություն տրամադրել իրենց կողմից առաջարկվող ծրագրերի, դրանցից ակնկալվող արդյունքների, որակավորման աստիճանների, դասավանդման ժամանակ կիրառվող ուսումնառության և գնահատման ընթացակարգերի և կրթական հնարավորությունների մասին: Տեղեկատվությունը կարող է նաև ներառել շրջանավարտների տեսակետը և աշխատանքի վայրը և ներկա ուսանողական կազմի ընդհանուր նկարագիրը: Այն պետք է լինի հավաստի, անաչառ, անկողմնապահ, մատչելի և չպետք է օգտագործվի զուտ շուկայավարության նպատակով: Հաստատությունը պետք է գործի վերոնշյալ սկզբունքներով:

ԲԱԺԻՆ 2

ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

2.1 Որակի ներքին ապահովման ընթացակարգերի կիրառում

Չափորոշիչ.

Որակի արտաքին ապահովման գործընթացները պետք է հաշվի առնեն եվրոպական չափորոշիչների և ուղեցուցների բաժին 1-ում նկարագրված որակի ներքին ապահովման գործընթացների արդյունավետությունը:

Ուղենիշներ.

Բաժին 1-ում պարունակվող որակի ներքին ապահովման չափորոշիչները արժեքավոր հիմք են հանդիսանում որակի արտաքին ապահովման գործընթացի համար: Կարևոր է, որ արտաքին գործընթացների ժամանակ հաստատությունների ներքին սեփական քաղաքականությունը և ընթացակարգերը մանրամասն գնահատվեն պարզելու համար, թե ինչ չափով են բավարարում չափորոշիչներին:

Եթե բարձրագույն ուսումնական հաստատությունները կարողանան ցուցաբերել ներքին որակի գործընթացների արդյունավետությունը, և եթե այդ գործընթացները պատշաճ կերպով ապահովեն որակը և չափորոշիչները, ապա արտաքին գործընթացները կլինեն ավելի ինտենսիվ:

2.2 Որակի արտաքին ապահովման գործընթացի զարգացում

Չափորոշիչ.

Որակի ապահովման գործընթացների նպատակները պետք է որոշվեն պատասխանատուների կողմից (ներառյալ բարձրագույն ուսումնական հաստատությունները) նախքան բուն գործընթացների ձևավորումը և պետք է հրատարակվեն գործընթացի կիրառման նկարագրությամբ:

Ուղենիշներ.

Նպատակի պարզությունը և ընթացակարգերի թափանցիկությունը ապահովելու համար որակի արտաքին ապահովման մեթոդները պետք է մշակվեն և զարգացվեն հիմնական մասնակիցների և բարձրակույն կրթական հաստատություններին ընդգրկող գործընթացի միջոցով: Վերջնականորեն համաձայնեցված գործընթացները պետք է հրատարակվեն և ներառեն գործընթացի նպատակների պարզ դրույթները, ինչպես նաև՝ կիրառվելիք ընթացակարգերի նկարագրությունը:

Քանի որ որակի արտաքին ապահովումը որոշակի պահանջներ է ներկայացնում ներգրավված հաստատություններին, պետք է ձեռնարկվի նախնական գնահատում, որպեսզի հաստատված ընթացակարգերը լինեն պատշաճ և չափից ավելի չմիջամտեն բարձրագույն ուսումնական հաստատությունների ընթացիկ աշխատանքին:

2.3 Որոշումների ընդունման չափանիշներ

Չափորոշիչ.

Որևէ պաշտոնական որոշում, որը կայացվել է որակի արտաքին ապահովման գործողության արդյունքում, պետք է հիմնված լինի հետևողականորեն կիրառվող հստակ հրատարակված չափորոշիչների վրա:

Ուղենիշներ.

Որակի արտաքին ապահովման գործակալությունների պաշտոնական որոշումները զգալի ազդեցություն ունեն հաստատությունների և քննարկվող ծրագրերի վրա: Անաչառության և վստահելիության սկզբունքների պաշտպանության որոշումները պետք է հիմնված լինեն հաստատված չափանիշների վրա և մեկնաբանվեն հետևողականորեն: Եզրակացությունները պետք է հիմնվեն գրավոր վկայությունների վրա, իսկ գործակալությունները անհրաժեշտության դեպքում պետք է եզրակացությունները մեղմացնելու իրավունք ունենան:

2.4 Գործընթացների համապատասխանությունը նպատակներին

Չափորոշիչ.

Որակի արտաքին ապահովման բոլոր գործընթացները պետք է հատուկ մշակվեն այնպես, որ համապատասխանեն իրենց առջև դրված նպատակներին:

Ուղենիշներ.

ԵԲԿՏ-ում որակի ապահովման գործակալությունները տարբեր նպատակների համար զանազան եղանակներով կիրառում են արտաքին տարբեր գործընթացներ: Սակայն փորձը ցույց է տալիս, որ գոյություն ունեն որակի արտաքին վերլուծության գործընթացների լայնորեն կիրառվող որոշակի բաղադրիչներ, որոնք ոչ միայն ույլ են տալիս երաշխավորել դրանց վավերականությունը, վստահությունը և օգտակարությունը, այլև հիմք են հանդիսանում որակի ապահովման եվրոպական չափանիշների համար:

Այս բաղադրիչների շարքում ամենակարևորներն են՝

- Պնդումը, որ որակի արտաքին ապահովման գործողությունները նախաձեռնող փորձագետներն ունեն համապատասխան հմտություններ և իրավասու են կատարել իրենց աշխատանքը,
- Հետաքրքրվածության կիրառումը փորձագետների ընտրության հարցում,
- Փորձագետներին պատշաճ վերապատրաստման կամ կարճաժամկետ դասընթացների տրամադրումը,
- Միջազգային փորձագետների ընդգրկումը
- Ուսանողների մասնակցությունը,
- Կիրառվող վերլուծական ընթացակարգերի ապահովումը, որոնք կարող են տրամադրել պատշաճ վկայություն ձեռքբերումների և եզրակացությունների աջակցման համար,
- Ինստիտուցիոնալ կատարելագործման և խորացման քաղաքականության, որպես որակի ապահովման արմատական բաղադրիչ, կարևորության ըմբռնումը:

2.5 Հաշվետվություն

Չափորոշիչ.

Հրատարակված չափորոշիչները պետք է լինեն հստակ և ընթեռնելի: Զեկույցներում պարունակվող ցանկացած որոշում, հանձնարարական կամ առաջարկ պետք է լինի մատչելի:

Ուղենիշներ.

Որակի արտաքին ապահովման գործընթացից առավելագույն օգուտ ստանալու համար կարևոր է, որ զեկույցները բավարարեն ընթերցողների կարիքներին: Երբեմն այդ զեկույցները

նախատեսված են ընթերցողների այլ շրջանակների համար, ինչը կպահանջի կառուցվածքի, ոճի, բնույթի, հանդեպ մանրակրկիտ ուշադրություն:

Ընդհանուր առմամբ, պետք է ընդգրկվեն նկարագրություն, վերլուծություն (ներառյալ համապատասխան վկայություններ), եզրակացություններ, հանձնարարականներ և առաջարկություններ: Պետք է լինի նախնական բավարար բացատրություն, որը թույլ կտա ոչ մասնագիտական ընթերցողին հասկանալ զեկույցի նպատակները, ոճը և որոշումների կայացման ժամանակ կիրառվող չափանիշները: Հիմնական ստացված տվյալները, եզրակացությունները և առաջարկությունները պետք է մատչելի լինեն ընթերցողների համար:

Զեկույցները պետք է հրատարակվեն ընթերցողի տեսքով, և դրանք օգտագործողներին (համապատասխան հաստատության ներսում և դրանից դուրս) պետք է հնարավորություն տրվի մեկնաբանել նյութի կիրառելիությունը:

2.6 Հաջորդող ընթացակարգեր

Չափորոշիչ.

Որակի ապահովման այն գործընթացները, որոնք պարունակում են գործողության առաջարկներ, պետք է ունենան գործողությունների ծրագիր:

Ուղենիշներ.

Որակի վերլուծությունը անհատական արտաքին վերլուծության գործողությունների մասին չէ, այլ մշտապես ավելի լավ աշխատանք կատարելու: Որակի արտաքին ապահովումը չի եզրափակվում զեկույցի հրատարակմամբ, այլ պետք է ներառի հետագա գործողությունների ընթացակարգեր, որպեսզի ապահովի առաջարկությունների համապատասխանությունը նախատեսված և նախագծված գործողության ծրագրերի հետ: Այս գործընթացը հետագայում կարող է նաև հանդիպումներ ներառել ինստիտուցիոնալ կամ ծրագրային ներկայացուցիչների հետ: Վերոնշյալի նպատակն է ապահովել որոշված բնագավառի բարեփոխումների արագ իրականացումը և խրախուսել ապագա զարգացումը:

2.7 Պարբերական վերլուծություններ

Չափորոշիչ.

Հաստատությունների և/կամ ծրագրերի որակի արտաքին ապահովումը պետք է նախաձեռնել պարբերաշրջանային հիմունքներով: Կիրառվելիք պարբերաշրջանի տևողությունը և վերանայման գործընթացները պետք է հստակ որոշվեն և նախապես հրապարակվեն:

Ուղենիշներ.

Որակի ապահովումը ոչ թե կայուն, այլ մշտապես փոփոխվող գործընթաց է: Այն պետք է շարունակելի լինի, այլ ոչ թե մեկ անգամ կատարվող: Այն չի եզրափակում մեկանգամյա վերլուծությամբ, կամ հաստատված հետագա ընթացակարգի իրականացմամբ: Այն պետք է պարբերաբար նորացվի: Հետագա արտաքին վերլուծությունները պետք է հաշվի առնեն գործողությունների առաջընթացը: Որակի վերլուծության ժամանակ կիրառվող գործընթացները պետք է հստակ սահմանվեն որակի արտաքին ապահովման գործակալության կողմից և հաստատություններին ներկայացվող պահանջները չպետք է գերազանցեն հաստատությունների առջև դրված նպատակները:

2.8 Համակարգի վերլուծություն

Չափորոշիչ.

Որակի ապահովման գործակալությունները ժամանակ առ ժամանակ պետք է հրատարակեն հակիրճ զեկույցներ՝ նկարագրելով և վերլուծելով իրենց վերանայումներից, գնահատումներից ստացված տվյալները:

Ուղենիշներ.

Որակի արտաքին ապահովման բոլոր գործակալությունները տեղեկություն են հավաքում առանձին ծրագրերի և/կամ հաստատությունների մասին, ինչը նյութ է հանդիսանում բարձրագույն կրթական համակարգերի կառուցվածքային վերլուծությունների համար: Այդ վերլուծությունները կարող են շատ օգտակար տեղեկություն տրամադրել զարգացման, միտումների, կիրառվող դրական փորձի և թերի զարգացած բնագավառների մասին ու կարող են հանդես գալ որպես օգտակար միջոց կրթական քաղաքականության և որակի բարելավման համար: Գործակալությունների գործունեությունը պետք է ներառի հետազոտական աշխատանք, որը կնպաստի վերջինից առավելագույն օգուտ ստանալուն:

ԲԱԺԻՆ 3-Ի ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ ԵՎ ՈՒՂԵՆԻՇՆԵՐ

1990-ականների սկզբից գրանցվել է եվրոպական արտաքին գնահատման գործակալությունների թվի արագ աճ: ՄԻաժամանակ գործակալությունների միջև համագործակցությունը և լավագույն փորձի փոխանակումը այս գործընթացի անբաժանելի մասն է կազմել: Արդեն իսկ 1994-1995 թթ.-ին, այսպես կոչված, եվրոպական պիլոտային ծրագրերը, որոնք նախաձեռնվել էին Եվրոպական հանձնաժողովի կողմից, ավարտվեցին որակի ապահովման հիմնական մեթոդաբանության շուրջ գործակալությունների փոխադարձ համաձայնությամբ: Այս հիմնական մեթոդաբանությունը ներառում է հետևյալ հասկացությունները՝ անկախ գործակալություններ, ինքնագնահատում, այցեր տեղերում և հրապարակային հաշվետվություն, որոնք ուրվագծված են բորձրագույն կրթության որակի ապահովման 1998 թ.-ի ԵԽ-ի առաջարկություններում: Հետևաբար 2000 թ.-ին ՈԱԵՑ-ի հիմնադրումը հանդիսանում է այս զարգացման ձևայնացում, իսկ 1990-ականներին այն կարողացավ ստեղծել հոջող կոնսենսուս:

ՈԱԵՑ-ին հաջորդող որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչները զարդացվել են երիտասարդ պատմություն ունեցող եվրոպական որակի արտաքին ապահովման նախադրյալների հիման վրա: Կոնսենսուսի նպատակներից է այդ չափորոշիչների ոչ շատ մանրամասն և ոչ էլ կարգադրողական լինելը: Նրանք չպետք է սահմանափակեն եվրոպական որակի ապահովման գործակալությունների ազատություններն իրենց կազմակերպություններում և գործընթացներում, երկրի կամ տարածաշրջանի փորձը և սպասումներն արտացոլելու գործում: Սակայն սույն չափորոշիչները պետք է երաշխավորեն, որ գործակալությունների արհեստավարժությունը, վստահելիությունը, ամբողջայնությունը տեսանելի և թափանցիկ են մասնակիցների համար և պետք է թույլատրեն հետազոտման

նպատակով գործակալությունների՝ իրար հետ համեմատվելը և եվրոպական համապատասխան չափորոշիչների կիրառումը:

Պետք է ավելացնել, որ չափորոշիչների այսպիսի կիրառումն օժանդակում է գործակալությունների փոխադարձ ընդունման և գնահատման կամ հավատարմագրման արդյունքների ուղղությամբ տարվող աշխատանքներին, որոնք հետագոտվել են կազմում են Եվրոպական հավատարմագրման կոնսորցիումի (ԵՀԿ) կողմից մշակված «Դրական փորձի ժողովածու»-ի մասը:

Որոշ ուղենիշներ էին ավելացվել, որպեսզի դրական փորձի մասին լրացուցիչ տեղեկատվություն տրամադրվի և որոշ դեպքերում ավելի մանրամասն բացատրվի չափորոշիչների իմաստը և կարևորությունը: Չնայած ուղենիշները չափորոշիչների մասը չեն կազմում՝ վերջիններս պետք է դիտարկվեն ուղենիշների հետ միասին:

ԲԱԺԻՆ 3

ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐ

3.1 Բարձրագույն կրթության համար որակի արտաքին ապահովման ընթացակարգերի կիրառում

Չափորոշիչ.

Գործակալությունների որակի արտաքին ապահովումը պետք է նկատի ունենա եվրոպական չափորոշիչների և ուղենիշների Բաժին 2-ում նկարագրված որակի արտաքին ապահովման գործընթացների ներկայությունը և արդյունավետությունը:

Ուղենիշներ.

Բաժին 2-ում ներկայացված որակի արտաքին ապահովման չափորոշիչները կարևոր հիմք են հանդիսանում որակի արտաքին ապահովման գործընթացների համար: Այս չափորոշիչներն արտացոլում են 1990 թ.-ի սկզբին Եվրոպայում որակի արտաքին ապահովման զարգացումից ձեռք բերված լավագույն փորձը: Հետևապես կարևոր է, որ վերջիններս ինտեգրվեն գործընթացին:

Որակի արտաքին ապահովման չափորոշիչներն որակի արտաքին ապահովման գործակալությունների հետ համատեղ պետք է հիմք հանդիսանան բարձրագույն ուսումնական հաստատությունների մասնագիտական և վստահելի որակի արտաքին ապահովման համար:

3.2 Պաշտոնական կարգավիճակ

Չափորոշիչ.

Գործակալությունները պետք է պաշտոնապես ճանաչվեն իրավասու հանրային իշխանությունների կողմից Բարձրագույն կրթության եվրոպական տարածքում՝ որպես որակի արտաքին ապահովման պարտականություններով գործակալություններ և պետք է ունենան օրինական հիմք: Նրանք պետք է ենթարկվեն օրենսդրությամբ սահմանված այն իրավասություններին, որոնց շրջանակներում, որ գործում են:

3.3 Գործողություններ

Չափորոշիչ.

Գործակալությունները պետք է կանոնավոր պարբերաբար նախաձեռնեն որակի արտաքին ապահովման գործողություններ (ինստիտուցիոնալ և տեխնիկական մակարդակներով):

Ուղենիշներ.

Ուղենիշները կարող են ներառել գնահատում, վերլուծություն, վերստուգում, հավատարմագրում կամ նմանատիպ այլ գործողություններ, որոնք պետք է գործակալության գործառույթների հիմնական մասը կազմեն:

3.4 Ռեսուրսներ

Չափորոշիչ.

Գործակալությունները պետք է ունենան ինչպես մարդկային, այնպես էլ ֆինանսական պատշաճ ու համամասնական ռեսուրսներ, որոնք թույլ կտան նրանց արդյունավետ կազմակերպել և վարել իրենց որակի արտաքին ապահովման գործընթացները՝ ընթացակարգերի և գործընթացների զարգացման պատշաճ նախապատրաստմամբ:

3.5 Առաքելություն

Չափորոշիչ.

Գործակալությունները պետք է ունենան հստակ և պարզ ձևակերպված նպատակներ, որոնք կարտահայտվեն հրապարակային դրույթներով:

Ուղենիշներ.

Այս դրույթները պետք է նկարագրեն գործակալությունների որակի ապահովման գործընթացի նպատակները և խնդիրները, բարձրագույն կրթության, հատկապես բարձրագույն ուսումնական հաստատությունների, համապատասխան մասնակիցների միջև աշխատանքի բաժանումը և այդ գործակալությունների աշխատանքի մշակութային և պատմական բովանդակությունը: Դրույթները պետք է հստակ արտահայտեն այն միտքը, որ գործակալության հիմնական գործառնությունը որակի արտաքին ապահովման գործընթացն է, և գոյություն ունեն գործակալության նպատակներին հասնելու համակարգված մոտեցումներ: Պետք է լինեն նաև փաստաթղթեր, որոնք ցույց կտան, թե ինչպես է դրույթը վերաձվում հստակ քաղաքականության և կիրառման ծրագրի:

3.6 Անկախություն.

Չափորոշիչ.

Գործակալությունները պետք է այն աստիճանի անկախ լինեն, որ կրեն ինքնուրույն պատասխանատվություն իրենց կողմից իրականացվող գործառույթների համար, և իրենց զեկույցներում նշված եզրահանգումների, առաջարկների վրա չազդի երրորդ կողմ, ինչպիսիք են՝ բարձրագույն կրթական հաստատությունները, նախարարությունները կամ այլ մասնակիցներ:

Ուղենիշներ.

Գործակալությունը պետք է ցուցաբերի իր անկախությունը այնպիսի չափանիշների միջոցով, ինչպիսիք են՝

- Բարձրագույն ուսումնական հաստատություններից և կառավարությունից իր գործառնական անկախությունը հիմնավորող փոստաթղթերը (կառավարության որոշում կամ օրենսդրական ակտ),
- Իր ընթացակարգերի, մեթոդների սահմանման և գործելու, արտաքին փորձագետների առաջադրման և նշանակման ու որակի ապահովման գործընթացների հետևանքների վերլուծության ձեռնարկումը կառավարություններից և քաղաքական իշխանության մարմիններից անկախ,
- Որակի ապահովման գործընթացների վերջնական արդյունքների համար պատասխանատվություն կրելը, մինչդեռ բարձրագույն կրթության համապատասխան մասնակիցները, մասնավորապես՝ ուսանողները, տեղեկանում են այդ գործընթացի ընթացքին:

3.7 Գործակալությունների կողմից կիրառվող որակի արտաքին ապահովման չափանիշներ և գործընթացներ

Չափորոշիչ.

Գործակալությունների կողմից կիրառվող գործընթացները, չափանիշները և ընթացակարգերը պետք է նախապես որոշված և հանրությանը մատչելի լինեն: Մովորաբար գործընթացները ներառում են՝

- Ինքնագնահատման կամ համարժեք ընթացակարգ որակի ապահովման գործընթացի առարկայի միջոցով,
- Արտաքին գնահատում մասնագետների խմբի կողմից, ներառյալ՝ ուսանողության անդամների և գործակալության կողմից որոշված այցեր տեղերում՝ գործընթացը գնահատելու նպատակով,
- Զեկույցի հրատարակում՝ ներառյալ ցանկացած որոշում, առաջարկ կամ այլ արդյունք,
- Զեկույցում պարունակվող ցանկացած առաջարկ որակի ապահովման գործընթացի առարկայի գործողությունները վերանայելու համար գալիք ընթացակարգ.

Ուղենիշներ.

Գործակալությունները առանձին նպատակների համար կարող են մշակել և կիրառել այլ գործընթացներ և ընթացակարգեր:

Գործակալությունները պետք է միշտ մանրակրկիտ ուշադրություն դարձնեն իրենց հրապարակած սկզբունքներին և պետք է երաշխավորեն, որ իրենց պահանջներն ու գործընթացները մասնագիտորեն են ղեկավարվում ու եզրակացությունները և որոշումները ձեռք են բերվել հետևողականորեն, անգամ եթե այդ որոշումները ձևավորվել են տարբեր խմբերի կողմից:

Որակի ապահովման վերաբերյալ պաշտոնական որոշումներ կամ պաշտոնական հետևանք ունեցող եզրակացություններ կայացնող գործակալությունները պետք է ունենան բողոքարկումների ընթացակարգ, որի բնույթը և ձևը պետք է որոշվի յուրաքանչյուր գործակալության կանոնադրությանը համապատասխան:

3.8 Պատասխանատվության ընթացակարգեր

Չափորոշիչ.

Գործակալություններն իրենց տրամադրության տակ պետք է ունենան նպատակահարմար ընթացակարգեր:

Ուղենիշներ.

Այս ընթացակարգերը կներառեն.

1. գործակալության որակի ապահովման հրատարակված քաղաքականությունը՝ տեղադրված նրա էլեկտրոնային կայքում,
2. փաստաթղթավորումը, նկարագրելով որ.
 - Գործակալության ընթացակարգերը և արդյունքները արտացոլվում են իր որակի ապահովման առաքելության և նպատակների մեջ,
 - Գործակալության աշխատառճը իր արտաքին փորձագետների հետ հիմնված է շահերի բախումից խուսափելու մեխանիզմի վրա,
 - Գործակալությունն ունի վստահելի մեխանիզմներ, որոնց շնորհիվ վերահսկում է ենթապայմանագրով կատարված ցանկացած գործողություն կամ արտադրված նյութի որակը,
 - Գործակալությունն ունի որակի ներքին ապահովման ընթացակարգեր, որոնք ներառում են հետադարձ կապի ներքին մեխանիզմներ, այսինքն՝ իր սեփական աշխատակազմից և խորհրդից/ հոգաբարձուներից տեղեկություն ստանալու միջոցներ, արտացոլման ներքին մեխանիզմներ, այսինքն՝ բարելավման նպատակով ներքին և արտաքին առաջարկություններին արձագանքման միջոցներ, ինչպես նաև՝ հետադարձ կապի ներքին մեխանիզմներ, այսինքն՝ փորձագետներից տեղեկություն ստանալու միջոցներ, որպեսզի տեղեկացնի և հիմնավորի իր սեփական առաջադիմությունը և զարգացումը:
3. Գործակալությունների գործողությունները ենթարկվում են պարտադիր պարբերական արտաքին վերլուծության հինգ տարին մեկ անգամ:

3. Որակի ապահովման գործակալությունների արտաքին փորձագիտական ծառայության համակարգ

Բեռլինում նախարարներն առաջադրեցին ՈԱԵՑ-ին ԵԱՀ-ի, ԲԿԵԱ-ի և ԵՈԻԱՄԻ-ի հետ համատեղ մշակել որակի ապահովման չափորոշիչների, գործընթացների և ուղենիշների համաձայնեցված փաթեթ և հետագուտել որակի ապահովման և/կամ հավատարմագրման գործակալությունների, մարմինների արտաքին փորձագիտական վերլուծության համակարգի երաշխավորման եղանակներ:

ՈԱԵՑ-ը և իր գործընկերներն ընդունեցին այս հանձնարարականը՝ հիմնվելով մանդատի մեկնաբանության վրա, ըստ որի գործակալությունների արտաքին փորձագիտական վերլուծության համակարգը ներառում է ոչ միայն գուտ վերլուծության գործընթացը, այլև որակի չափորոշիչների մանրակրկիտ ուսումնասիրությունը, որի վրա կարող է հիմնվել վերլուծությունը: Այնուհետև պայմանավորվածություն էր ձևափոխվել՝ ըստ որի

գործակալությունների վերլուծությունը պետք է մեկնաբանվի որպես միջոց, որի շնորհիվ հնարավոր կլինի հասնել դրանց թափանցիկության, տեսանելիության և համեմատելիության նպատակին:

Ուստի սույն զեկույցի հիմնական առաջարկն է՝ Եվրոպայում բարձրագույն կրթության որակի արտաքին ապահովման հաստատված գործակալությունների գրանցամատյանի ստեղծումը: Տվյալ առաջարկը կարելի է համար պատասխան այն սպասումների, ըստ որոնց, շուտով ի հայտ կգան ճանաչման կամ հավատարմագրման շնորհումից շահույթ ստանալ ցանկացող որակի ապահովման մարմիններ: Փորձը ցույց է տալիս, որ բավականին բարդ է վերահսկել նմանատիպ նախաձեռնությունները: Սակայն Եվրոպան բացառիկ հնարավորություն ունի իրագործել նոր շուկայի գործնական կառավարումը, բայց ոչ թե գոյություն ունեցող գործակալությունների շահերը պաշտպանելու նպատակով, այլ վստահ լինելու, որ որակի ապահովման օգուտը չի նվազեցվում անարգելի մարդկանց գործողությունների պատճառով:

Սույն առաջարկությունը հաշվի է առել Եվրոպական մոտեցումը, պահանջները և միաժամանակ նմանատիպ փորձի և գործընթացների միջազգային զարգացումը: Հետևաբար այս մասը սկսվում է միջազգային փորձի համառոտ վերլուծությամբ և նախաձեռնություններով, ապա այն ուրվագծում է օժանդակության սկզբունքների և որակի չափորոշիչների համակարգը: Այս ուրվագիծը ներկայացնում է Եվրոպայում գործող որակի արտաքին ապահովման գործակալությունների առաջարկվող գրանցամատյանը: Տվյալ գրանցամատյանի կարևոր բաղադրիչներն են վերլուծությունը և Եվրոպական չափորոշիչներին գործակալությունների համապատասխանությունը: Վերջում ներկայացված է բարձրագույն կրթության որակի ապահովման Եվրոպական խորհրդատվական ֆորումը:

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄ

Ներկայումս Եվրոպան միակ տարածաշրջանը չէ, որտեղ բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտում դինամիկ զարգացումներ են տեղի ունենում: Զեկույցի այս հատվածը նկարագրում է որոշ միջազգային կազմակերպությունների փորձը և նախաձեռնությունները, մասնավորապես՝ Բարձրագույն կրթության որակի ապահովման գործակալությունների միջազգային ցանցը (ԲԿՈԱԳՄՅ), Համալսարանների նախագահների միջազգային ասոցիացիան (ՀՆՄԱ), ԱՄՆ-ի բարձրագույն կրթության հավատարմագրման խորհուրդը (ԲԿՀՆ), Եվրոպայի տնտեսական զարգացման կազմակերպությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն: Այս կազմակերպությունների որակի ապահովման հետ կապված աշխատանքները շատ կարևոր էին տվյալ զեկույցը պատրաստելիս: Չնայած, որ միջազգային փորձն ուղղակիորեն չի արտացոլվել որոշակի հանձնարարականներում, այնուամենայնիվ, որոշ տարրեր ներկայացվել էին այս գլխի հանձնարարականներին համապատասխան:

Որակի արտաքին ապահովման գործակալությունների բարձր որակի և դրական փորձի ձևակերպումը մի քանի տարի եղել են միջազգային օրակարգերում: 1999 թ.-ից ի վեր ԲԿՈԱԳՄՅ-ն քննարկել է որակի արտաքին ապահովման գործակալությունների համար որակի գաղափարը, որը շրջանառության մեջ է դրվել ՀՆՄԱ-ի կողմից, որպեսզի ճշտվի, թե որ գործակալություններն են իրավասու բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին ապահովման կարիքը բավարարելու համար: Որակի գաղափարը լայնորեն քննադատվեց, և դրա փոխարեն ԲԿՈԱԳՄՅ-ն ուշադրությունը սևեռեց գործակալությունների համար դրական փորձի չափանիշի ձևակերպման վրա: Արդյունքում մշակվեցին գործակալությունների դրական փորձը ընդհանուր

հայտարարի բերող սկզբունքներ՝ միաժամանակ պահպանելով այդ գործակալությունների նպատակների և պատմամշակութային արժեքների միջազգային բազմազանությունը:

Գործակալությունների արտաքին փորձագիտական վերլուծության առաջարկությունների տեսանկյունից ԲԿՀԽ-ն պատշաճ աշխատանք կատարեց: Այն ոչ պետական կազմակերպություն է, որն ԱՄՆ տարածքային, մասնագիտացված, ազգային և որակավորված հավատարմագրման գործակալությունների համար հանդես է գալիս որպես հովանավորող մարմին: Հավատարմագրող գործակալությունները, որոնք ցանկանում են ճանաչվել ԲԿՀԽ-ի կողմից, պետք է ապացուցեն, որ բավարարում են նրա չափորոշիչներին: Հավատարմագրող կազմակերպություններից ակնկալվում է բավարարել իրենց ուսումնական որակը, ցուցաբերել հաշվետվություն, խրախուսել բարելավումները, կիրառել պատշաճ ընթացակարգեր, մշտապես վերագնահատել հավատարմագրման գործընթացը և ունենալ համապատասխան ռեսուրսներ: ԲԿՀԽ-ն պահանջում է, որ անդամներն ամեն վեց տարին մեկ անցնեն, այսպես կոչված, ճանաչման վերանայում: Սույն զեկույցի առաջարկների և ԲԿՀԽ-ի մոտեցման միջև գոյություն ունեն ընդհանրություններ, օրինակ՝ պարբերական վերանայման հարցում: Սակայն զեկույցը առաջնություն է տալիս գործակալությունների որակի ապահովմանը:

Եվրոպայի տնտեսական զարգացման կազմակերպությունը և ՅՈՒՆԵՍԿՕ-ն ևս համատեղ գործողություններ են ձեռնարկել միջսահմանային բարձրագույն կրթության որակի ապահովման ուղենիշների մշակման գործում: Եվրոպայի տնտեսական զարգացման կազմակերպության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի համատեղ ուղեցույցը վերջնական տեսքի է բերվել 2005 թ.-ին, բայց նախագծման գործընթացը ցույց է տվել, որ գոյություն ունի հակադրություն բարձրագույն կրթության միջազգայնացումը կարգավորելու կարիքի և այն փաստի միջև, որ առկա որակի ազգային ապահովումը հաճախ ուշադրություն է դարձնում բացառապես տեղային հաստատությունների տեղային ներկայացման վրա: Ուստի վերոնշյալը ներկայիս որակի ապահովման համակարգերին ուղղված մարտահրավեր է զարգացնելու ինչպես ազգային, այնպես էլ արտասահմանյան մատակարարները և ծրագրերը ընդգրկող համապատասխան մեթոդաբանությունների և բարձրագույն կրթության միջազգայնացման հնարավոր թերությունները սահմանափակելու նպատակով:

Եվրոպայի տնտեսական զարգացման կազմակերպության և ՅՈՒՆԵՍԿՕ-ի կողմից հաստատված ուղենիշներն առաջարկում են, որ որակի արտաքին ապահովման գործակալությունները երաշխավորեն իրենց որակի ապահովման վերաբերյալ որոշումներում արտասահմանյան շահույթ հետապնդող հաստատությունների կամ մատակարարների, ինչպես նաև՝ հեռական ուսուցման և կրթական ոչ ազգային մոդելների ներառումը: Այնուամենայնիվ, ուղենիշների նախագծման գործընթացը հաշվի է առնում, որ արտասահմանյան գործակալությունների հետ համագործակցելը շատ դեպքերում կպահանջի տեղային օրենսդրության և վարչական ընթացակարգերի փոփոխություններ:

Այս զեկույցը հավանություն է տալիս բարձրագույն կրթական հաստատություններում որակի ապահովման համար միջազգայնացման կարևորությանը և ներդրմանը: Չնայած դեռ վաղ է առաջարկված որակի արտաքին ապահովման եվրոպական չափորոշիչներում մեջբերելու համար, այնուամենայնիվ, եվրոպական գրանցամատյանը ներառում է ինչպես Եվրոպայում գործող արտասահմանյան, այնպես էլ միջսահմանային գործողություններ իրականացնող եվրոպական գործակալություններին:

ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Եվրոպայի բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին ապահովման բնագավառը համեմատաբար երիտասարդ է, սակայն որպես նրա հասունացում կարելի է դիտարկել այն փաստը, որ վերջին տարիներին գործակալություններ ուշադրություն են դարձնում իրենց սեփական որակի ներքին և արտաքին ապահովման վրա: 2003 թ.-ի փետրվարին Միտգես (Բսպանիա) քաղաքում ՈԱԵՑ-ը կազմակերպել էր սեմինար, որի գլխավոր թեման գործակալությունների որակի ապահովումն էր: Սեմինարի մասնակիցները քննարկեցին ներկայումս գործող գործակալությունների արտաքին գնահատումը և եկան այն եզրակացության, որ ՈԱԵՑ-ը պետք է աշխատի իր անդամ գործակալությունների պարբերական վերլուծության ուղղությամբ: Համապատասխանորեն, վերջինս ստացավ Բեռլինի մանդատը, երբ արդեն սկսվել էր գործակալությունների արտաքին վերլուծության գնահատումը և որոնք «Ե-4» հանդիպումների օրակարգի մասն էին կազմում:

Սույն զեկույցը առաջարկում է, որ եվրոպական յուրաքանչյուր գործակալություն ոչ ավելի ուշ, քան 5 տարին մեկ կատարի կամ ներկայացնի իր գործողությունների արտաքին պարբերական վերլուծությունը: Արդյունքները պետք է ներկայացվեն զեկույցում, որը կհաստատի գործակալության համապատասխանությունը եվրոպական չափորոշիչներին: (Տես՝ Բաժին 2, Մաս 2):

Ապագայում, անշուշտ, ԵԿԲՏ-ի որակը ապահովողների և գործողություն իրականացնողների շրջանակները կընդլայնվեն: Այդ իսկ պատճառով կարևոր է, որ ՈԱԵՑ-ի ոչ անդամ գործակալությունները ներգրավվեն որակի ապահովման հետ կապված քննարկումներին և, ցանկության դեպքում, ազատ կարողանան համեմատվել եվրոպական չափորոշիչների հետ: Ուստի սույն զեկույցը չի սահմանափակում իր առաջարկությունները միայն եվրոպական ազգային գործակալություններով և չի ենթադրում միայն ԵԱԵՑ-ի առկա կամ հնարավոր անդամներին: Ընդհակառակը՝ ոչ եվրոպական, բայց Եվրոպայում գործող կամ ազգային մակարդակով ճանաչում չունեցող եվրոպական գործակալությունները պետք է նույնպես ներգրավվեն վերլուծության մեջ, որը կերաշխավորի իրենց համապատասխանությունը եվրոպական չափորոշիչներին:

Պարբերական վերլուծության ընդհանուր դրույթները հետևյալն են՝

- Բոլոնիայի գործընթացի մասնակիցների կողմից հաստատված և պաշտոնապես որպես ազգային ճանաչված որակի արտաքին ապահովման գործակալությունները պետք է վերլուծվեն, անգամ, եթե նրանք գործում են երկրի սահմաններից դուրս: Եվրոպական այս գործակալությունները մյուս կողմից հավանաբար կենթարկվեն ոչ թե ազգային վերլուծության, այլ կվերլուծվեն ՈԱԵՑ-ի կողմից: Գործակալությունների վերլուծությունը պետք է ներառի դրանց՝ որակի արտաքին ապահովման գործակալությունների Եվրոպական չափորոշիչներին համաձայնեցվածության գնահատումը:
- Բոլոնիայի գործընթացի մասնակիցների կողմից չհաստատված և պաշտոնապես չճանաչված գործակալությունները կարող են սեփական նախաձեռնությամբ գնահատվել որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչներին ոչ համապատասխան:
- Վերլուծությունները պետք է հաջորդեն ինքնազնահատման, անկախ փորձագետներ և հաստատված զեկույց պարունակող գործընթացին:

Արտաքին վերլուծությունը կիրականացվի ազգային կամ գործակալական մակարդակով: Հետևապես ակնկալվում է, որ գործակալությունների վերլուծությունը պետք է բխի կամ ազգային չափորոշիչներից, կամ էլ գործակալության ներսում գործող որակի ներքին ապահովման

գործընթացներից: Այս զեկույցը ցանկանում է շեշտադրել խրախուսման սկզբունքի կարևորությունը և հատկապես առաջարկում է, որ ՈԱԵՑ-ը և իր անդամները գործակալության նկատմամբ նախաձեռնություն ցուցաբերեն միայն այն դեպքում, երբ հինգ տարվա ընթացքում ոչինչ չի նախաձեռնվել ազգային մակարդակով կամ անմիջապես գործակալության կողմից: Եթե գործակալությունը ՈԱԵՑ-ի անդամ չէ և հինգ տարվա ընթացքում ազգային մակարդակով կամ անմիջապես գործակալության կողմից ոչինչ չի նախաձեռնվել, ապա վերլուծության նախաձեռնության համար պատասխանատու է գրանցման Եվրոպական հանձնաժողովը:

Երբ վերլուծությունը նախաձեռնում է տեղային իշխանությունը, դրա նպատակները կարող են շատ լայնածավալ լինել և ներառել գործակալության կողմից ազգային մանդատի իրագործումը: Այնուամենայնիվ, այս առաջարկի գլխավոր բաղադրիչն այն է, որ վերլուծություններ, անկախ նրանից, թե նախաձեռնված են ազգային, գործակալական կամ ՈԱԵՑ-ի մակարդակով, հաշվի առնեն գործակալության՝ որակի արտաքին ապահովման գործակալությունների Եվրոպական չափորոշիչներին համապատասխանության սահմանը: ՈԱԵՑ-ի գլխավոր ասամբլեան 2004 թ.-ի նոյեմբերին տեղի ունեցած ժողովի ժամանակ որոշեց, որ ՈԱԵՑ-ին անդամակցելու չափանիշները պետք է համապատասխանեցված լինեն որակի արտաքին ապահովման գործակալությունների կողմից առաջարկվող Եվրոպական չափորոշիչներին: Այսպիսով՝ գործակալության վերլուծությունը կբացահայտի վերջինիս համաձայնեցվածության աստիճանը Եվրոպական և ՈԱԵՑ չափանիշների հետ:

Վերջին հաշվով պատշաճ փորձով միջազգային փորձագետների ներգրավումը կնպաստի վերլուծության գործընթացին:

Պարբերական վերլուծության համակարգումը նախ և առաջ տեղային իշխանությունների և անմիջապես գործակալության պատասխանատվությունն է: ՈԱԵՑ-ը կմասնակցի համակարգման գործընթացին միայն իր անդամ գործակալությունների դեպքում, որտեղ ՈԱԵՑ-ն պետք է հաստատի այն աստիճանը, որով որ անդամ գործակալությունները համապատասխանում են որակի արտաքին ապահովման գործակալությունների Եվրոպական չափորոշիչներին՝ զեկույցին համապատասխան, իսկ հակառակ դեպքում ՈԱԵՑ-ի կարգորոշիչները կմանրամասնեն հետևանքները:

Գործակալության արտաքին վերլուծության տիպային գործընթացի ուրվագիծը ցույց տրված այս զեկույցի հավելվածում:

**ԵՎՐՈՊԱՅՈՒՄ ԳՈՐԾՈՂ ՈՐԱԿԻ ԱՐՏԱՔԻՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ
ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՐԱՆՑԱՄԱՏՅԱՆ**

Նախքան 2003 թ. Բեռլինի նախարարական հանդիպումը ՈԱԵՑ-ը համապատասխան մասնակիցների հետ սկսել էր որակի ապահովման գործակալությունների Եվրոպական գրանցամատյանի նախագծումը, որը ներառում է պետական, մասնավոր և թեմատիկ գործակալությունները, որոնք գործում են կամ պատրաստվում են գործել Եվրոպայում:

Գրանցամատյանը կօգնի բարձրագույն ուսումնական հաստատություններին և կառավարություններին հեշտությամբ գտնել Եվրոպայում գործող մասնագիտական և վստահելի գործակալություններ: Առաջին հերթին, նրա հիմքը ոչ ազգային աստիճանաշնորհների ճանաչումն է: Ճանաչման ընթացակարգերը կամրապնդվեն, եթե թափանցիկ լինե՞ր անմիջապես մատակարարների՝ ճանաչված գործակալությունների կողմից հաստատված որակով ապահովված լինելու փաստը: Երկրորդ՝ գրանցամատյանի օգնությամբ մասնագիտական գործակալություններ գտնելու միջոցով բարձրագույն կրթական

հաստատությունների համար հնարավոր կլինի իրականացնել որակի ապահովման գործընթացը երկրի սահմաններից դուրս:

Այնուամենայնիվ, բարձրագույն ուսումնական հաստատությունների և այլ մասնակիցների համար ամենակարևորը գրանցամատյանի տեղեկատվական բնույթն է: Բացի այդ՝ գրանցամատյանն ինքնին կարող է շատ օգտակար գործիք լինել բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի արտաքին ապահովման համեմատելիության և թափանցիկության ձեռքբերման գործում:

Գրանցամատյանը պետք է բացահայտ կերպով ցույց տա նոր մուտք գործող որակի արտաքին ապահովման գործակալությունների՝ եվրոպական չափորոշիչների հետ համաձայնեցվածության աստիճանը: Այնուամենայնիվ, պետք է շեշտել, որ այս զեկույցի նպատակը գրանցամատյանը որպես դասակարգման գործիք ներկայացնելը չէ:

Գրանցամատյանում կարող են գրանցվել Եվրոպայի տարածքում գործող և ծառայություններ մատուցող բոլոր գործակալությունները, այդ թվում նաև արտասահմանյան, միջազգային և վերազգային: Գործակալությունները կգրանցվեն գրանցամատյանի տարբեր հատվածներում՝ կախված այն բանից՝ արտաքին փորձագիտական վերլուծություն անցել են, համաձայնեցված են որակի արտաքին ապահովման գործակալությունների Եվրոպական չափորոշիչների հետ, գործում են երկրի տարածքում, թե՛ ոչ:

Հետևաբար գրանցամատյանի հնարավոր կառուցվածքն է՝

Հատված 1 Արտաքին փորձագիտություն անցած գործակալություններ, որոնք լինում են՝

- Վերլուծված և որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական բոլոր չափորոշիչները իրագործող եվրոպական ազգային գործակալություններ,
- Վերլուծված, բայց որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական ոչ բոլոր չափորոշիչները իրագործող եվրոպական ազգային գործակալություններ,
- Եվրոպայում գործող, վերլուծված և որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական բոլոր չափորոշիչները իրագործող ոչ ազգային և ոչ եվրոպական գործակալություններ,
- Եվրոպայում գործող, վերլուծված, բայց որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական ոչ բոլոր չափորոշիչներն իրագործող ոչ ազգային և ոչ եվրոպական գործակալություններ,

Հատված 2 Չվերլուծված գործակալություններ, որոնք լինում են՝

- Եվրոպական ազգային, ոչ ազգային և ոչ եվրոպական չվերլուծված և հետևաբար գրանցամատյանում գրանցվելիս իրենց տրամադրած տեղեկատվության հիման վրա դասակարգվող գործակալություններ:

Գրանցամատյանի կառուցվածքն ունի հետևյալ տեսքը

Գրանցամատյանի առաջարկվող կառուցվածքը		Վերլուծված		Չվերլուծված
		Եվրոպական չափորոշիչների հետ համաձայնեցված	Եվրոպական չափորոշիչների հետ չհամաձայնեցված	
Եվրոպական	Տարծքում			

ազգային գործակալություններ	գործող			
	Միջսահմանային			
Եվրոպական ոչ ազգային գործակալություններ				
Եվրոպայում գործող էքստրա- եվրոպական գործակալություններ				

Եվրոպական գրանցամատյանում ընդգրկվելու կարգը կսահմանի գրանցամատյանի եվրոպական խորհուրդը: Խորհուրդը գրանցամատյանում գործակալություն ընդգրկվելու չափանիշ, ինչպես նշվել է պարբերական վերլուծության ժամանակ, սահմանում է որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական բոլոր չափորոշիչների հետ համաձայնեցված լինելը: Պետք է զարգացվի նաև բարձրագույն կրթական համակարգերի բազմազանությունը հաշվի առնող մեկ այլ չափանիշ:

Խորհուրդը կլինի ԲԿԵԱ-ի, ԵՌԻԱՄ-ի, ԵՀԱ-ի, ՈԱԵՑ-ի ր եվրոպական գործատուներին ներկայացնող կազմակերպությունների, միությունների, մասնագիտական կազմակերպությունների և կառավարության ներկայացուցիչների կողմից նշանակված ինն անդամներից բաղկացած ոչ բյուրոկրատական կառույց, որոնք կպորձեն ինքնուրույն, այլ ոչ թե որպես իրենց նշանակած կազմակերպությունների ներկայացուցիչներ: ՈԱԵՑ-ը կկատարի քարտուղարության պարտականություններ խորհրդի համար, որը հանդիպելու է կես տարին մեկ:

Գրանցամատյանի եվրոպական խորհուրդը առաջին հերթին պետք է գրանցամատյանի նկատմամբ ձևակերպի սեփականության իրավունք:

Գրանցամատյանի եվրոպական խորհուրդը պետք է նաև հաստատի անկախ և վստահելի բողոքարկումների համակարգ, որպեսզի պաշտպանի գրանցամատյանում չընդգրկվածների շահերը: Երբ այն սկսի գործել, խորհրդի կողմից կազմված արձանագրության բաղկացուցիչ մասը պետք է կազմի:

**ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԵՎՐՈՊԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ՖՈՐՈՒՄ**

2001 թ.-ին Պրահայի հանդիպումից հետո «Ե-4» խումբը, որը բաղկացած էր ՈԱԵՑ-ից, ԵՀԱ-ից, ԵՌԻԱՄ-ից և ԲԿԵԱ-ից, մշտապես հանդիպում էր քննարկելու Բոլոնիայի գործընթացի և բարձրագույն կրթական հաստատությունների Եվրոպական որակի վերաբերյալ խնդիրները: 2003 թ.-ի Բեռլինի հանդիպումից ի վեր «Ե-4»-ի հիմնական ուշադրությունը սևեռված էր բարձրագույն ուսումնական հաստատությունների որակի ապահովման վերաբերյալ նախարարներին մանդատի իրագործման վրա: Եվրոպական մակարդակով այս համագործակցությունը կառուցողական էր: Այդ իսկ պատճառով այս չորս կազմակերպությունները եկել էին համաձայնության, որ «Ե-4»-ի հիման վրա ձևավորված եվրոպական խարհրդատվական ֆորումը կշարունակի գործել: Սույն ֆորումի ստեղծումը հնարավորություն կտա ՈԱԵՑ-ի, ԵՀԱ-ի, ԵՌԻԱՄ-ի և ԲԿԵԱ-ի հետ առկա համագործակցությունը դնել ավելի ամուր հիմքերի վրա: Առաջին հերթին այս ֆորումը կգործի որպես տեղեկատվական և խորհրդատվական մարմին եվրոպական հիմնական մասնակիցների

համար և այն կնամանակի այն համաձայնությունները, ըստ որոնց, չորս վերոնշյալ կազմակերպությունները հոգում են իրենց ֆինանսական ծախսերը և մասնակցությունն՝ առանց նոր վարչական կառույց հիմնելու: Հետագայում ֆորումը պետք է ներգրավի նաև աշխատանքի շուկայի ներկայացուցիչներին:

4. ԱՊԱԳԱՅԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՒՂԻՆԵՐ

Սույն զեկույցը ներառում է առաջարկություններ և հանձնարարականներ, որոնք մշակվել և հաստատվել են բարձրագույն կրթության որակի ապահովման ոլորտի եվրոպական հիմնական մասնակիցների կողմից: Զեկույցի գոյությունը արդեն իսկ այն բանի ապացույցն է, որ հնարավոր է հասնել փոխըմբռնման մի բնագավառում, որտեղ նմանատիպ համաձայնությունը ի սկզբանե անհնար է՝ հաշվի առնելով մասնակիցների հետաքրքրվածության բազմազանությունը: Այս առաջարկները ուսանողների և ամբողջ հասարակության համար նախատեսում են բարձրագույն կրթության հաստատություններից ավելի շատ թափանցիկություն, անվտանգություն և տեղեկատվություն: Նրանք բարձրագույն կրթական հաստատություններին հավասարապես առաջարկում են ճանաչում, վստահելիություն և հնարավորություններ՝ ցուցաբերելու մրցունակություն և նվիրում՝ բորձր որակի հանդեպ: Տվյալ առաջարկությունները բարելավում են որակի ապահովման գործակալությունների մակարդակը, վստահելիությունը և ավելի արդյունավետ են դարձնում նրանց կապը եվրոպական մասնագիտացված նմանատիպ հաստատությունների հետ:

Սակայն առաջարկությունները մնում են զուտ առաջարկ, եթե չեն ուղեկցվում որակյալ ռազմավարության իրագործմամբ: Եթե Բերգենում նախարարների հանդիպման ժամանակ սույն սույն զեկույցը հավանության արժանանա, միջոցներ կձեռնարկվեն ներկայացնել դրա հիմնական բաղադրիչները:

Այն փաստը, որ սույն զեկույցի որոշ առաջարկներ արագ կիրականացվեն, չի նշանակում, որ մնացած առաջարկները ևս հեշտ կընդունվեն: Ավելի շատ ժամանակ կպահանջվի հաստատությունների և գործակալությունների կողմից որակի ներքին և արտաքին չափորոշիչների լայնածավալ ընդունումը, քանզի դա կախված է մասնակից կողմերի՝ իրենց արդեն իսկ հիմնված ու կայուն բարձրագույն կրթական համակարգը փոխելու և զարգացնելու ցանկությունից: Որակի ապահովման չափորոշիչներում առաջարկվածը մարտահրավեր է որոշ բարձրագույն կրթական հաստատությունների համար, հատկապես, երբ որակի ապահովման ավանդույթը նոր է և զարգացման փուլում է կամ երբ ուսանողների կարիքների բավարարումը և նրանց մուտքը աշխատաշուկա տվյալ հաստատության մշակույթի մասը չէ: Նմանապես որակի արտաքին ապահովման և որակի ապահովման գործակալությունների համար չափորոշիչները պահանջում են, որ բոլոր մասնակիցները՝ հատկապես գործակալությունները, մանրակրկիտ ուսումնասիրեն իրենց գործունեությունը և համեմատեն իրենց փորձը եվրոպական ակնկալիքների հետ: Նոր պարբերական վերլուծության ընթացակարգը պայմաններ կստեղծի հասնելու նպատակներին ճիշտ ժամանակին, որը տեղի կունենա միայն բոլորի կողմից չափորոշիչների ընդունման օգուտը ճանաչելու դեպքում:

ՈԱԵՑ-ը գործում է բարձրագույն կրթության ազգային անհատական հիմքի վրա, ինչը նշանակում է որակի արտաքին ապահովման հետ կապված ինքնավարություն: Այդ իսկ պատճառով տվյալ զեկույցը չի կարող լինել հրահանգային, իսկ առաջարկությունները և հանձնարարականները մասնագետների հանդեպ ներկայացված են փոխադարձ հարգանքի ոգով: Որոշ մասնակից կողմեր կարող են ցանկություն հայտնել իրենց իրավական կամ

վարչական դաշտի ներքո պահպանել չափորոշիչները և վերլուծության ընթացքը: Իսկ ուրիշներից կարող է ավելի շատ ժամանակ պահանջվել այդ անելու համար՝ կշռաքարին դնելով մի կողմից փոփոխությունների հետ կապված օգուտը, իսկ մյուս կողմից «ստատուս քվոյի» հարմար վիճակը: Ընդհանուր առմամբ ՈԱԵՑ-ին, «Ե-4» գործընկերներին և այլ հիմնական մասնակիցներին զգալի և բարդ աշխատանք է սպասվում գալիք տարիներին: Ուստի այս զեկույցը ցույց է տալիս, որ դրա ավարտումը նույնը չէ, ինչ ԵԿԲՏ-ում որակի ապահովման չափանիշների վերաբերյալ Բոլոնիայի գործընթացի նպատակների իրագործումը: Առջևում դեռ շատ աշխատանք կա անելու այս զեկույցի առաջարկություններն իրագործելու և բարձրագույն ուսումնական հաստատությունների ու որակի արտաքին ապահովման գործակալությունների միջև համագործակցության և որակի միջավայրն ապահովելու ուղղությամբ: Այն, ինչը գործողության մեջ է դրվել Բեռլինի մանդատով, շարունակական օգնության և խրախուսման կարիք կունենա, եթե պետք է ԵԿԲՏ-ում ամբողջությամբ գործող որակի ապահովման եվրոպական չափորոշիչների տրամադրի:

Ամուր, ինքնավար և արդյունավետ բարձրագույն ուսումնական հաստատություններով, որակի և չափորոշիչների կարևորության ուժեղ զգացումով, լավ վերլուծություններով, որակի ապահովման վստահելի գործակալություններով, արդյունավետ գրանցամատյանով և այլ մասնակիցների հետ, ինչպիսիք են՝ գուշատուները համագործակցությամբ ԵԿԲՏ-ն այժմ իրագործելի է, և այս զեկույցում պարունակվող առաջարկությունները կնպաստեն դրա իրականացմանը:

ԼՐԱՑՈՒՄ

Որակի ապահովման գործակալությունների պարբերական վերլուծություն⁴-տեսական մոդել

Ներքևում ներկայացված մոդելը որակի ապահովման գործակալությունների արտաքին վերլուծության գործընթացի ուրվագիծն է: Այն ներկայացված է որպես որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչների հետ համապատասխանեցվածությունը գնահատելու հավանական գործընթացի օրինակ: Այնուամենայնիվ, նշենք, որ մոդելի նպատակը ուսուցողական և նկարագրական լինելն է: Ուստի այն շատ մանրամասն է նկարագրված, անգամ ավելի մանրամասն, քան կարող է անհրաժեշտ լինել գործակալություններին անհատական փորձագիտական վերլուծությունների ժամանակ: Այստեղից հետևում է, որ առաջարկված գործընթացը ոչ մի դեպքում չպետք է համարել չափորոշիչ:

Գործընթացները ներառում են հետևյալ բաղադրիչները՝

- Վերլուծության համար չափորոշիչների և արձանագրության ձևակերպում
- Փորձագետների առաջադրում և նշանակում
- Գործակալության ինքնագնահատում
- Այցեր տեղերում
- հաշվետվություն

⁴ Լրացման կառուցվածքը նման է վերջերս հյուսիսային երկրներում որակի ապահովման գործակալությունների փոխադարձ ճանաչման ծրագրի ձեռնարկում նշվածին

1. Չափորոշիչներ

Չափորոշիչները պետք է հաստատեն վերլուծության նպատակները՝ ելնելով իշխանությունների, մասնակիցների և գործակալությունների հեռանկարներից ու շահերից: Գործակալության բոլոր առաջադրանքները և գործառույթները ևս պետք է ընդգրկվեն և պարզ է, որ այս կերպ օրակարգի ոչ մի հարց բաց չի թողնվի:

2. Ինքնագնահատում

2.1 Գործակալությունից որպես վերլուծության հիմք պահանջվող նախնական տեղեկատվություն

Պատշաճ նախնական տեղեկատվությունն անհրաժեշտ է գործակալության աշխատանքի բովանդակությունը հասկանալու համար: Այս հատվածը կներառի՝

2.1.1 Ազգային բարձրագույն կրթական համակարգի համառոտ ուրվագիծը, ներառյալ՝

- աստիճանաշնորհման կառուցվածքը,
- ինստիտուցիոնալ կառուցվածքը,
- նոր առարկաների, ծրագրերի, հաստատությունների հաստատման գործում ներառված կողմերը և ընթացակարգերը,
- որակի ապահովման այլ ընթացակարգեր,
- բարձրագույն ուսումնական հաստատությունների կարգավիճակը:

2.1.2 Առանձին գործակալության և, ընդհանրապես, բարձրագույն կրթության գնահատման պատմական ակնարկ

- առաքելությունը,
- գործակալության հիմնադրումը (կառավարություն, բարձրագույն կրթական հաստատություն և այլն),
- գործակալության օրինական շրջանակների և այլ պաշտոնական կարգորոշիչների նկարագրությունը (օրենսդրություն, նախարարության հրամանագրեր),
- գործակալության ֆինանսավորումը,
- ճիշտ և ընդունված գնահատման ձև,
- գործակալության ներքին կազմակերպությունները, ներառյալ՝ խորհրդի նշանակման և հավաքման ընթացակարգերը,
- բացի բարձրագույն կրթության գնահատումից՝ գործակալության այլ պարտականությունները,
- գործակալության միջազգային գործողությունները, ներառյալ՝ պաշտոնական համաձայնություններ, ինչպես նաև՝ այլ գործողություններ, օրինակ՝ մասնակցություն համաժողովներին, աշխատանքային խմբերի և անձնակազմի փոխանակում,
- գործակալությունների դերը գնահատման հոջորդ գործողություններում՝ հետևանքներ և տույժեր:

2.2 Գործակալության կողմից նախաձեռնված որակի արտաքին ապահովում

Գործակալությունը պետք է փաստեր ներկայացնի, որ կանոնավոր կերպով նեխաձեռնում է բարձրագույն ուսումնական հաստատությունների կամ ծրագրերի որակի ապահովում, որը պետք է ներառի կամ հավատարմագրում, վերլուծություն և վերստուգում, կամ գնահատում, որոնք գործակալության հիմնական գործառույթների մասն են կազմում:

Կանոնավոր ասելով պետք է հասկանալ, որ գնահատումները նախատեսվում են՝ հիմնվելով համակարգային ընթացակարգերի վրա և որ վերջին երկու տարիների ընթացքում անց է կացվել որակի մի քանի գնահատում:

Փաստերը պետք է ներառեն՝

- գործակալության մեթոդաբանական շրջանակների նկարագրությունը,
- անցկացված որակի գնահատումների քանակի նկարագրությունը և գնահատված միավորների թիվը:

2.3 Գործակալության կողմից կիրառվող գնահատման մեթոդ

2.3.1 Նախնական տեղեկատվություն

Գնահատման և այլ արմատական հարցերի համընդհանուր ծրագրավորման ակնարկը պետք է կարողանա ցույց տալ՝ արդյոք գործակալությունն աշխատում է թափանցիկ մեթոդաբանական ընթացակարգերի հիման վրա:

Այս ակնարկը պետք է ներառի՝

- գնահատված գործակալությունների հետ հաղորդակցման և ամփոփման ընթացակարգերը,
- ուսանողների մասնակցության վերաբերյալ գործակալության ռազմավարությունը,
- չափանիշների կամ անհատական գնահատման ծրագրի պլանի հաստատման հետ կապված ընթացակարգերը,
- գնահատման չափանիշները (նախապես որոշված ցուցանիշներ, օրինական փաստաթղթեր, առարկայի համեմատում, մասնագիտական չափորոշիչներ, գնահատված հաստատությունների հաստատված նպատակներ),
- առանձին վերլուծությունների ժամանակ մեթոդաբանական բաղադրիչների փոփոխման աստիճանը:

2.3.2 Մեթոդաբանության բաղադրիչներ

Ակնարկը վկայում է, որ մեթոդաբանությունը, որով աշխատում է գործակալությունը, նախապես որոշված է և հրապարակային, ինչպես որ վերլուծության արդյունքները:

Մեթոդաբանությունը ներառում է՝

- գնահատման ենթական օբյեկտի ինքնագնահատումը կամ համանման ընթացակարգը,
- գործակալության կողմից որոշվող փորձագետների խմբի արտաքին գնահատումը և այցեր տեղերում,
- հրապարակային արդյունքներով զեկույցի հրապարակումը:

Գործակալությունները հատում նպատակների համար կարող են մշակել և կիրառել այլ մեթոդներ:

Գործակալությունների որոշումները և զեկույցները պետք է միասնական լինեն սկզբունքների և պահանջների տեսանկյունից, անգամ եթե տարբեր խմբեր են դատողություններ անում:

Եթե գնահատման որոշումը կայացնում է գործակալությունը, ապա պետք է ստեղծել բողոքարկումների համակարգ: Այս մեթոդաբանությունը վերաբերում է գործակալության կարիքներին:

Եթե գործակալությունը պետք է առաջարկություններ անի կամ պայմանական որոշում կայացնի, ապա արդյունքները ստուգելու նպատակով պետք է իրագործի համակարգման ընթացակարգ:

2.3.3 Արտաքին փորձագիտական խմբի դերի մասին ակնարկ

Արտաքին փորձագիտական խմբի դերի մասին ակնարկը պետք է ներառի՝

- փորձագետների առաջադրման և նշանակման ընթացակարգեր, ներառյալ՝ միջազգային փորձագետների և մասնակիցների, ինչպիսիք են գործատուները և ուսանողները, ընդգրկման չափանիշներ,
- փորձագետների ուսուցման մեթոդներ,
- փորձագետների հանդիպումներ,
- գործակալության և փորձագետների միջև աշխատանքի բաժանում,
- գործակալության անձնակազմի դերը գնահատումների ժամանակ,
- գնահատման համար պատասխանատու գործակալության անձնակազմի անդամների որոշում և նշանակում:

2.3.4 Փաստաթղթավորում

Գործակալության ընթացակարգերի որոշ ակնարկների վերաբերյալ փաստաթղթերի հավաքագրումը անհրաժեշտ է գործակալության ինքնագնահատման և տեղերում այցերի հետ կապված ընթացակարգերը որոշելու համար:

2.3.4.1 Ինքնագնահատման ընթացակազմին վերաբերող ակնարկ

Այս ակնարկը պետք է ներառի՝

- գործակալության կողմից տրամադրված ուղենիշների բովանդակության հստակեցում,
- գործակալության կողմից տրամադրված ընթացակարգային խորհուրդ,
- ինքնագնահատման խմբերի կազմավորման պահանջներ՝ ներառյալ ուսանողների դերը,
- ինքնագնահատման խմբերի ուսուցանում,
- ինքնագնահատման համար տրամադրված ժամանակը:

2.3.4.2 Այցեր տեղերում ընթացակարգին վերաբերող ակնարկ

Այս ակնարկը պետք է ներառի՝

- հարցաթերթիկներ/հարցազրույցի արձանագրություններ,
- մասնակիցների կամ տեղեկություն տրամադրողների ընտրության սկզբունքներ (առանձնահատուկ մասնագետներ կամ դասակարգեր),
- այցի տևողության սկզբունքներ,
- հանդիպումների թիվը և միջին տևողությունը,
- հանդիպումների փաստաթղթավորում (ներքին/արտաքին, գրառումներ, պատճեններ),
- արտաքին փորձագետների խմբի աշխատանքի մեթոդներ:

2.3.4.3 Հաշվետվություններ

Փաստաթղթավորումը հաշվետվությունների վերաբերյալ պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝

- հաշվետվության նպատակը,
- հաշվետվության նախագծումը (գործակալության անձնակազմ կամ փորձագետներ),
- հաշվետվության ձևաչափը (ձևը, ծավալը),
- հաշվետվության բովանդակությունը (փաստաթղթեր կամ միայն վերլուծություն, առաջարկություններ),
- նախագծված զեկույցի վերաբերյալ գնահատված խմբերի կարծիքների տրամադրման սկզբունքներ,

- հրատարակման ընթացակարգեր և քաղաքականություն (միջավայրի մեկնաբանում և ներկայացում),
- անմիջապես հաջորդող գործընթացներ (սեմինարներ, համագումարներ),
- հաջորդող երկարատև գործընթացներ (հաջորդող գնահատում կամ այց):

2.3.5. Բողոքարկումների համակարգ

Գործակալությունը հաստատում է իր որոշումների դեմ բողոքարկումների մեթոդը և ինչպես է այն առնչվում գործակալության կարիքի հետ: Փաստաթղթավորումից պետք է պարզ դառնա, թե որքանով է բողոքարկումների համակարգը հիմնված լսումների վրա, որի միջոցով գործակալությունը գնահատման ընթացքում գտնվողներին կարող է հնարավորություն տալ մեկնաբանելու և հարցում անցկացնելու գնահատման արդյունքների վերաբերյալ:

Ըստ էության՝ գործակալությունը պետք է փաստեր տրամադրի, որ բողոքարկումների համակարգը հնարավորություն է տալիս գնահատման ընթացքում գտնվողներին արտահայտել իրենց կարիքը գնահատման արդյունքների վերաբերյալ:

2.4 Լրացուցիչ փաստաթղթավորում

Այս լրացուցիչ փաստաթղթավորումը պետք է ակնարկ պարունակի ուսումնասիրության, վիճակագրական նյութերի կամ այլ չնշված փաստաթղթերի շուրջ: Այս նյութը պետք է հրապարակային լինի:

2.5 Գործակալությունների որակի համակարգի ընթացակարգեր

Գործակալությունը պետք է ցույց տա փաստաթղթավորում, որ ունի որակի ներքին ապահովման մեխանիզմներ, որոնք համապատասխանում են որակի ատրտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչներին:

2.6 Վերջնական անդրադարձ

Գործակալության ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների վերլուծությունը անհրաժեշտ է նրա՝ նոր պահանջներին, տենդենցներին հարմարվելու և աշխատանքի շրջանակների ամուր և վստահելի մեթոդաբանությունը և կառավարման մոդելը պահպանելով՝ մշտապես գործողությունները կատարելագործելու կարողության մասին տեղեկություն ստանալու համար:

3. Ուղենիշներ արտաքին վերլուծության խորհրդի համար

Այս ուղենիշները նկարագրում են, թե ինչ է ակնկալվում արտաքին վերլուծության խորհրդից: Դրանք են՝

- նշանակում և ընդհանուր կազմակերպում,
- այցեր տեղերում
- հաշվետվության նախագծում:

Ինչպես արդեն նշվել է, վերլուծության մեջ գտնվող գործակալությունները պետք է ինքնգնահատման զեկույց ներկայացնեն՝ տրամադրված ուղենիշներին համապատասխան: Ինքնատուսումնասիրության արդյունքները պետք է ուղարկվեն վերլուծության խորհրդին նրա այցից առաջ մեկ ամսից ոչ ուշ:

3.1 Արտաքին վերլուծության խորհրդի նշանակում

Այս հատվածը վերաբերում է վերլուծությունն իրականացվող փորձագետների նշանակմանը: Արտաքին փորձագետների խումբը պետք է կազմված լինի՝

- մեկ կամ երկու որակի ապահովման փորձագետներից միջազգային,
- բարձրագույն ուսումնական հաստատության ներկայացուցչից ազգային,
- ուսանողության ներկայացուցչից ազգային,
- մասնակից անդամից օրինակ գործատու, ազգային:

Այս փորձագետներից որևէ մեկը պետք է ընտրվի արտաքին վերլուծության խորհրդի նախագահ:

Խորհուրդ է տրվում խորհրդում ընդգրկել ևս մեկ մարդ, որը գործակալությունից անկախ կգործի որպես քարտուղար:

Փորձագետներին կարող են առաջադրել գործակալությունները, մասնակիցները կամ իշխանությունները, բայց վերլուծության անաչառությունը երաշխավորելու համար էական է, որ փորձագետներին առաջադրի գործակալությունից անկախ երրորդ մարմին, որը կարող է լինել օրինակ ՈԱԵՑ-ը կամ գործընթացում չընդգրկված գործակալություն: Փորձագետների ճանաչման հիմքը պետք է նրանց անկախության մասին վկայող փաստաթուղթը լինի: Այնուամենայնիվ, գնահատման մեջ գտնվող գործակալությունը պետք է հնարավորություն ունենա մեկնաբանել խորհրդի վերջնական արդյունքները:

3.2 Այց տեղերում

Այցի ժամանակ պետք է արձանագրություն կազմել՝ ընդգրկելով ներքոնշյալը:

Նախընտրելի է, որ այցի տևողությունը լինի 2-3 օր՝ ներառյալ նախապատրաստման և համակարգման գործընթացը՝ կախված վերլուծության մեջ գտնվող գործակալության և նրա բովանդակության մասին արտաքին վերլուծության խմբի ունեցած նախնական տեղեկատվությունից: Այցից մեկ օր առաջ խորհուրդը կհանդիպի և համաձայնության կգա այցի համապատասխան թեմայի շուրջ: Այցի նպատակն է վավերացնել ինքնաուսումնասիրությունը: Սա հաշվի առնելով՝ պետք է բանավոր նախապատրաստել հարցազրույցի հարցեր:

Այց կարող է ներառել ինչպես կառավարչական մակարդակի հանդիպումներ գործակալության խորհրդի, ղեկավարների, անձնակազմի, փորձագետների, սեփականատերերի կամ գնահատված հաստատությունների հիմնական մասնակիցների, այնպես էլ իրականացնող հանձնաժողովի անդամների հետ:

3.3 Հաշվետվության պատրաստում

Բացի ընդհանուր չափորոշիչների իրագործումից՝ զեկույցը պետք է մեծ ուշադրություն դարձնի որակի արտաքին ապահովման գործակալությունների եվրոպական չափորոշիչների հետ համապատասխանեցվածությանը, ինչպես նշվել է ինքնաուսումնասիրության արձանագրության մեջ, և ապագա կատարելագործման հնարավորություններին և առաջարկություններին:

Այցից հետո արտքաին վերլուծության խորհուրդը քարտուղարության օգնությամբ կնախագծի զեկույցը: Վերջնական տարբերակը պետք է ուղարկվի վերլուծության մեջ գտնվող գործակալությանը փաստացի սխալների մեկնաբանման համար: